ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

7 (76)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 7 (76), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ագլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Վահրամ Հովյան
Տիգրան Ղանալանյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 7 (76), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

Վահրամ Հովյան
Հայրենադարձության խնդիրն արդի փուլում ……..... 4

Սամվել Մարտիրոսյան
Համացանցի և բջջային կապի ներթափանցումը Հայաստան 11

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հրայր Փաշայան
ԼՂՀ արտաքին քաղաքականությունը. 2016թ. օգոստոս 16

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան
Արցախի անկախացումը՝ ազգերի ինքնորոշման դասական օրինակ 21

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. օգոստոս …..... 27

Տաթևիկ Հայրապետյան
Խաղաղության դիսկուրսի բացակայությունն Ադրբեջանում 33

Ջոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. օգոստոս 38

Ռոման Կարապետյան
Իրանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. օգոստոս 44

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը. 2016թ. օգոստոս 50

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի ռազմական ոլորտի բարեփոխումների շուրջ 57

Հուշագիր հեղինակին 69

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Վահրամ Հովյան*

Հայրենադարձությունը, ըստ կազմակերպվածության աստիճանի, կարելի է բաժանել երկու տեսակի՝ ծրագրված և տարերային։ Ծրագրվածը պետական մարմինների և սփյուռքյան կառույցների կողմից նախօրոք մշակված և իրականացվող հայրենադարձությունն է։ Տարերայինը անհաղթահարելի ուժի (ֆորսմաժորային իրավիճակի, ինչպիսիք են, օրինակ, պատերազմները, տվյալ խմբի նկատմամբ իրականացվող բռնությունների ալիքը, բնական կամ տեխնածին աղետները և այլն) ազդեցությամբ սփյուռքի համայնքներից հայրենակիցների զանգվածային ներհոսքն է մայր երկիր։ Այս դեպքում հայրենադարձները նույն փախստականներն են՝ այն տարբերությամբ, որ ժամանում են ոչ թե օտար երկիր, այլ հայրենիք։

Հայաստանի ներկա կարողությունները, ցավոք, թույլ չեն տալիս իրականացնել հայրենադարձության խոշոր ծրագրեր, այն է՝ մշակել և իրականացնել զանգվածային հայրենադարձության քաղաքականություն։ Հետևաբար, այսօրվա դրությամբ ծրագրված հայրենադարձության մասին խոսելը, թերևս, ժամանակավրեպ է, թեև համապատասխան հայեցակարգ կամ ռազմավարություն կարելի է մշակել՝ ապագայում կիրառելու նպատակով, երբ դրա համար ստեղծվեն բարենպաստ պայմաններ։

Սակայն Հայաստանի նորագույն պատմության ընթացքում եղել են ոչ ծրագրված՝ տարերային հայրենադարձության ալիքներ։ Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել երեքը.

1. 1989-91թթ. – ադրբեջանահայության զանգվածային ներհոսքը Հայաստան՝ կապված Բաքվի, Սումգայիթի, Կիրովաբադի և Ադրբեջանի այլ բնակավայրերի հայկական կոտորածների հետ։ Հայրենադարձության այս տարերային ալիքի հետևանքով Հայաստանում հայտնվեց ավելի քան 300 հազար ադրբեջանահայություն։

---

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ, Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար։

2. 2003թ. – իրաքահայության զգալի քանակության ներհոսք՝ պայմանավորված իրաք-ամերիկյան պատերազմով: Այս ալիքի ժամանակ մոտ 3000 իրաքահայ գաղթեց Հայաստան:
3. 2011-ից առ այսօր – սիրիահայության զգալի քանակությամբ ներհոսքը Հայաստան՝ պայմանավորված 2011թ. սկիզբ առած և մինչ օրս շարունակվող սիրիական ճգնաժամով, ավելի կոնկրետ՝ պատերազմով: Համաձայն ՀՀ Սփյուռքի նախարարության տվյալների՝ սիրիական ճգնաժամի հետևանքով Հայաստանում ապաստանել է մոտ 17 հազար սիրիահայ:

Վերոգրյալը հուշում է, որ տարերային հայրենադարձության խնդրին Հայաստանը բախվել է, և քիչ չէ հավանականությունը, որ ապագայում ևս կբախվի: Դա կարելի է համարել անխուսափելի աշխարհի թեժ կետերում ստվարաթիվ համայնքներ ունեցող երկրի համար: Նկատի ունենալով սույն հանգամանքը՝ կարծում ենք, նպատակահարմար կլինի, որ ինչպես պետությունը՝ ի դեմս ՀՀ-ի և ԼՂՀ-ի, այնպես էլ Սփյուռքի կառույցները պատրաստ լինեն դրան: Դա թույլ կտա, մի կողմից՝ սահուն և նվազագույն կորուստներով իրականացնել հայրենադարձությունը (օրինակ՝ հնարավոր ֆորսմաժորային իրավիճակները կանխատեսելու և ժամանակին հայ համայնքներին վտանգավոր շրջաններից դեպի հայրենիք փոխադրելու ճանապարհով), մյուս կողմից՝ հնարավորինս արագ և արդյունավետ լուծել հայրենադարձների խնդիրները Հայաստանում: Խոսքը վերաբերում է ինչպես սկզբնական շրջանում նրանց կենսական պահանջները բավարարելու, այնպես էլ ավելի լայն՝ հայաստանյան հասարակության մեջ նրանց լիարժեք ինտեգրման խնդիրներին: Այդ նպատակով, կարծում ենք, նպատակահարմար կլինի, որ ՀՀ և սփյուռքյան կառույցներն իրականացնեն հետևյալ գործնական միջոցառումները.

- ***Հայրենադարձության հիմնադրամի ստեղծում.*** Այսօր թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում գործում են բազմաթիվ հիմնադրամներ: Դրանցից ոչ մեկը, սակայն, չունի անմիջականորեն հայրենադարձության խնդիրներով զբաղվելու գործառույթ: Կարծում ենք, նպատակահարմար կլինի համահայկական այդպիսի մի կառույցի ստեղծումը, որտեղ հավաքված միջոցները կծախսվեն հենց հայրենադարձության հետ կապված խնդիրները լուծելու համար: Այդպիսի կառույցի գործունեության դեպքում տարերային հայրենադարձության ալիքների ժամանակ ոչ թե այլ հիմնադրամները կամ բարեգործական և այլ կառույցները կսկսեն հանպատրաս-

տից գումարներ տրամադրել հայրենադարձներին օգնելու նպատակով, ինչի արդյունքում իրականացված ծախսերը կլինեն նվազ արդյունավետ, այլ նախօրոք մշակված ռազմավարության և ծրագրերի համապատասխան՝ հատուկ հայրենադարձության նպատակով ստեղծված հիմնադրամը կբավարարի դրա հետ կապված ծախսերը՝ նպատակային գումարներ հատկացնելով այդ գործընթացի հաջող իրականացման համար։

- ***Բարեգործական կազմակերպությունների կողմից հայրենադարձության ծրագրերի իրականացում.*** Հայաստանյան և սփյուռքյան բարեգործական կառույցները («Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀԲԸՄ, ՀՕՄ, ՀՕՖ, ԱՀԱԸ և այլն) նույնպես միայն տարերային հայրենադարձության առաջացման դեպքում հախուռն կերպով արձագանքում են դրան՝ փորձելով իրենց միջոցներով թեթևացնել փախստականների հոգսերը։ Հախուռն գործունեությունից ավելի կազմակերպվածի անցնելու նպատակով, կարծում ենք, նպատակահարմար է, որ վերջիններս իրենց ծրագրերում և գործունեության ռազմավարության ու հայեցակարգի մեջ ամրագրեն հայրենադարձության բաղադրիչը։ Օրինակ՝ սիրիական ճգնաժամի սկզբից ի վեր հայկական գրեթե բոլոր բարեգործական կազմակերպությունները (այլ կառույցների նման՝ պետական, հասարակական, սփյուռքյան, եկեղեցական և այլն) հսկայական գումարներ են հատկացրել ինչպես Սիրիայում մնացածներին, այնպես էլ հարևան երկրներ (Լիբանան, Հորդանան և այլուր) տեղափոխված սիրիահայ գաղթականներին օգնելու համար։ Մինչդեռ այդ գումարներով նվազագույն կորուստներով կարելի էր կազմակերպել վերջիններիս հայրենադարձությունը, եթե նախապես նրանց ծրագրերում լիներ նաև հայրենադարձության բաղադրիչը։ Կամ գոնե հնարավոր կլիներ այդ գումարներով օգնել Հայաստան տեղափոխվել ցանկացողներին՝ հեշտացնելով այդ գործընթացը։
- ***ՀՀ և ԼՂՀ մշակելի հողատարածքների հաշվառում՝ դրանք հայրենադարձներին տրամադրելու նպատակով.*** Այս դրույթը վերցված է իսրայելական հայրենադարձության փորձից։ Ինչպե՞ս տեղի ունեցավ 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի կեսը հրեական պետության բացակայության պայմաններում Պաղեստինի ժողովրդագրական յուրացումը հրեաների կողմից։ Հրեական կապիտալը՝ մեծահարուստները, Պաղեստինում գնում էին հողատարածքներ և դրանք անվճար տրամադրում հրեա ներգաղթյալներին՝ բնակության համար։ Ներգաղթողներին հողեր

բաժանելու հրեական փորձը լիովին կիրառելի է նաև հայերիս պարագայում, այն շահեկան տարբերությամբ, որ, եթե հրեաները ստիպված էին դրամով գնել հողատարածքներ, ապա մենք այդ խնդիրը չունենք: Ներկայում ՀՀ-ում և ԼՂՀ-ում առկա են մեծ քանակությամբ մշակելի հողատարածքներ, որոնք սպասում են իրենց մշակին և կարող են օգտագործվել հայրենադարձության նպատակով: Պայմաններն առկա են: Խնդիրն ավելի շատ գործընթացի արդյունավետ կազմակերպման և կառավարման մեջ է[1]: Իսկ դրա համար անհրաժեշտ է.

1. ՀՀ և ԼՂՀ տարածքներում անմշակ հողերի հաշվառում;
2. Դրանցից առավել մշակելի հատվածների առանձնացում;
3. Ըստ անդամների թվաքանակի՝ դրանց հատկացում հայրենադարձված ընտանիքներին՝ որքան մեծ է ընտանիքը, այնքան շատ է հողաբաժինը սկզբունքով;
4. Հողահատկացումը պետք է լինի սկզբնական շրջանում՝ 5 տարի անհատույց օգտագործման, իսկ դրանից հետո՝ ՀՀ կամ ԼՂՀ քաղաքացիություն ձեռք բերելու պարագայում՝ սեփականության իրավունքով:

Սեփականության իրավունքով օժտելը լուրջ գործոն է հանգամանքների բերումով Հայաստանում հայտնված սփյուռքահայերին մայր հողին ամուր կամ անգամ վերջնականապես կապելու համար: Մի բան է, երբ մարդը գտնվում է ընդամենը փախստականի կարգավիճակում՝ ունեզուրկ և իրավազուրկ վիճակում, լիովին այլ բան, երբ գտնվում է տվյալ երկրում սեփականատիրոջ իրավունքով. ունենում է որոշակի ունեցվածք՝ հետագայում լիովին սեփականաշնորհելու հեռանկարով[2]:

[1] Նման քաղաքականություն ունեցել է նաև հայկական փորձը: Խոսքը վերաբերում է Ցեղասպանության արդյունքում Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների խնդրին: Ինչպե՞ս լուծվեց Խորհրդային Հայաստանում նրանց խնդիրը, եթե ոչ հողատարածքների հատկացման միջոցով: Կամ՝ մի՞թե նույն կերպ չէր լուծվում 1829-30թթ. Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանի կազմում մնացած հայկական բնակավայրերից դեպի Ռուսական կայսրության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստան գաղթած հայերի խնդիրը:

[2] Կարելի է առարկել, թե սփյուռքահայերը բազմաշերտ զանգված են՝ ըստ իրենց զբաղմունքի կամ մասնագիտությունների: Հետևաբար, դժվար է պատկերացնել, որ վերջիններս կհամաձայնեն Հայաստանում զբաղվել հողագործությամբ: Առաջին հայացքից սա ճիշտ դիտարկում է: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ տարերային հայրենադարձությամբ Հայաստանում հայտնված սփյուռքահայերը պատերազմներից, այլ ֆորսմաժորային իրավիճակներից մազապուրծ, լիովին ունեզուրկ և անօթևան մարդիկ են: Արդյո՞ք նման պայմաններում նրանք կհրաժարվեն իրենց տրամադրվող գույքից՝ ի դեմս հողատարածքի, վկայակոչելով իրենց մասնագիտությունը կամ նախկին զբաղմունքը: Կարծում ենք, դա ողջամիտ չէ:

- ***Հատուկ հարկային քաղաքականություն հայրենադարձների նկատմամբ.*** Քանի որ տարերային հայրենադարձության արդյունքում Հայաստանում հայտնված սփյուռքահայերը ներկայացնում են յուրահատուկ խումբ և նրանց բնորոշ հատկություններից մեկն էլ խոցելիությունն է, ապա նրանց նկատմամբ պետական քաղաքականությունը գոնե սկզբնական շրջանում պետք է լինի հնարավորինս հոգատար: Դրա դրսևորումներից մեկն էլ հայրենադարձ գործարարների նկատմամբ նպաստավոր հարկային քաղաքականությունն է: Խոսքն այստեղ վերաբերում է ոչ թե խոշոր բիզնեսին, քանի որ այդ ոլորտի ներկայացուցիչներն, անկախ ամեն ինչից, չեն կարող խոցելի կամ անպաշտպան խումբ համարվել, այլ առաջին հերթին հողահատկացումների արդյունքում հողաբաժին ստացած և դրա վրա գյուղատնտեսությամբ զբաղվող սփյուռքահայ ընտանիքներին: Կարծում ենք, որ նպատակահարմար է վերջիններիս 5 տարով ազատել գյուղատնտեսական հարկերից: Նույնպիսի մոտեցում նպատակահարմար է որդեգրել նաև Հայաստանում մանր և միջին բիզնես հիմնադրած սփյուռքահայ գործարարների նկատմամբ: Նման հարկային քաղաքականությունը կնպաստի ոչ միայն հայրենադարձների հաստատմանը Հայաստանում, այլև վերջիններիս տնտեսական բարեկեցության ապահովմանը սեփական աշխատանքի միջոցով: Արդյունքում՝ ոչ միայն կթեթևանա պետության վրա ընկած բեռը՝ հայրենադարձներին օգնելու առումով, այլև կաշխուժանա երկրի սոցիալ-տնտեսական կյանքը[3]:
- ***Տեղեկատվական աջակցության կենտրոնի ստեղծում.*** Ինչպես ցույց է տվել հատկապես սիրիահայերի փորձը, տարերային հայրենադարձության արդյունքում Հայաստանում հայտնված սփյուռքահայերի գլխավոր խնդիրներից մեկն էլ անտեղյակությունն է: Նրանք չեն տիրապետում հանրապետության օրենսդրությանը, հետևաբար, պատշաճ կերպով չգիտեն իրենց իրավունքների մասին, չգիտեն որ հարցով ում դիմել, չգիտեն նաև Հայաստանի հարկային օրենսդրության, գործարար միջավայ-

[3] Վերջապես, դա կարող է լինել յուրահատուկ փորձարկում հարկային քաղաքականության ոլորտում: Եվ եթե արդյունքները գոհացուցիչ լինեն, ապա նման քաղաքականությունը կարելի է ընդլայնել՝ տարածելով ոչ միայն հայրենադարձների, այլև ընդհանրապես ողջ երկրի բնակչության վրա՝ դրանով իսկ խթանելով գյուղատնտեսության, ինչպես նաև մանր ու միջին բիզնեսի զարգացումն ամբողջ երկրում:

րի և այլնի մասին: Տարբեր խնդիրների առնչությամբ տեղեկատվություն ստանալու համար նրանք ստիպված են դիմել տարբեր ատյաններ, ինչն էապես բարդացնում է նրանց սկզբնական կեցությունը հայրենիքում: Այս խնդրի հաղթահարման նպատակով, կարծում ենք, նպատակահարմար է ստեղծել հատուկ հայրենադարձների խնդիրներով մասնագիտացված տեղեկատվական աջակցության կենտրոն, որի հիմնական գործառույթը վերջիններիս ապահովումն է անհրաժեշտ և հավաստի տեղեկատվությամբ: Քանի որ, ինչպես ցույց է տալիս սիրիահայության օրինակը, հայրենադարձները հիմնականում շփվում են ՀՀ Սփյուռքի նախարարության հետ, ապա նպատակահարմար է նման կենտրոնի ստեղծումը վերջինիս կազմում կամ վերջինիս կից:

- ***Շինարարական քաղաքականության փոփոխություն***. Սա, թերևս, ավելի շատ տնտեսագիտական խնդիր է՝ դուրս մեր մասնագիտական կոմպետենտությունից: Այնուամենայնիվ, քանի որ տարերային հայրենադարձության հետևանքով Հայաստանում հայտնված սփյուռքահայերի գլխավոր խնդիրներից մեկն էլ բնակարաններով ապահովվածության (օթևանի) խնդիրն է, հարկ ենք համարում որոշակի դիտարկումներ իրականացնել այդ առնչությամբ: Կարծում ենք, բազմաթիվ էլիտար շենքերի փոխարեն կարելի է զարկ տալ մեծաքանակ հասարակ բնակելի շենքերի կառուցմանը: Այսօր Երևանի կենտրոնական թաղամասերում կառուցվող բազմաթիվ էլիտար շենքեր բնակեցվում են լավագույն դեպքում կիսով չափ: Նման շինարարական քաղաքականությունը անհեռանկարային է ոչ միայն երկրի բնակեցման, մասնավորապես՝ տարերայնորեն Հայաստանում հայտնված սփյուռքահայերի օթևանի ապահովման հարցը լուծելու, այլև գործարարության առումով, քանի որ թույլ բնակեցվածության արդյունքում տուժում են նաև շինարարական բիզնեսով զբաղվող գործարարները:

Այդ ամենի փոխարեն կարելի է որպես շինարարական հիմնական ուղղություն որդեգրել հասարակ և մատչելի բնակարանների կառուցումը: Ընդորում՝ ոչ միայն Երևանում, այլև մարզերում: Այդ կերպ հնարավոր կլինի ավելի հեշտ եղանակով լուծել փախստականի կարգավիճակում Հայաստանում հայտնված սփյուռքահայերի օթևանի ապահովման հարցը: Նախ՝ բազ-

մաթիվ այդպիսի բնակարանների առկայության դեպքում դրանք կարելի է գոնե ժամանակավորապես տրամադրել հայրենադարձներին՝ սկզբնական շրջանում անվճար, այնուհետև՝ վարձակալության կամ գնման միջոցով սեփականաշնորհման հիմունքներով: Այս համատեքստում կարևոր է նաև սփյուռքահայերին մատչելի բնակարանային վարկերով ապահովման խնդիրը: Բացի այդ, հասարակ և մատչելի բնակարանների առկայության պարագայում բացառված չէ, որ բազմաթիվ սփյուռքահայեր հենց սկզբից կկարողանան սեփական միջոցներով սեփականության իրավունքով ձեռք բերել (գնել) բնակարաններ, ինչը չեն կարող անել էլիտար շենքերի պարագայում:

- ***Հայրենադարձության մասին օրենսդրության մշակում.*** Չնայած Հայաստանը վաղուց ի վեր բախվում է հայրենադարձության խնդրին, սակայն այդ ոլորտը կարգավորող օրենսդրական հենք մեր երկրում դեռևս չկա: Խոսքն ինչպես հայրենադարձության մասին օրենքի, այնպես էլ հայրենադարձության ռազմավարության և հայեցակարգի մշակման մասին է: Վերջիններում ամրագրված պետք է լինեն հայրենադարձության բնագավառում պետական քաղաքականության մոտեցումները, հայրենադարձության սկզբունքները, փուլերը՝ յուրաքանչյուրն իրեն վերաբերող կոնկրետ գործողություններով, և այլն[4]: Նման ինստիտուցիոնալ հենքի (մեխանիզմների ամբողջության) առկայությունը հնարավորություն կտա ոչ միայն խուսափել տարերային և հախուռն՝ չհամակարգված գործողություններից, այլև որոշակիորեն ինքնակարգավորման և ինքնակառավարման հուն տեղափոխել հայրենադարձության գործընթացը:

Ընդհանուր առմամբ, տարերային հայրենադարձության արդյունքում Հայաստան վերադարձած սփյուռքահայերի նկատմամբ պետական քաղաքականությունը, հաշվի առնելով վերջինիս սահմանափակ հնարավորությունները, պետք է հենվի ոչ թե պետության կողմից նրանց նյութական և այլ բարիքներ առատորեն տրամադրելու սկզբունքի, այլ նրանց հնարավորություն տալու վրա, որպեսզի իրենք սեփական աշխատանքի և տաղանդի շնորհիվ ստեղծեն այդ բարիքներն իրենց համար, ինչը, վերջիններիս խնդիրները զգալիորեն լուծելուց բացի, զգալի նպաստ կբերի նաև երկրին:

[4] Անգամ 1946-48թթ. մեծ հայրենադարձությունը, որը կազմակերպվել էր Կրեմլի մակարդակով, իրականացվեց հանպատրաստից և հախուռն՝ առանց ռազմավարության և հայեցակարգի:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԵՎ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆ.
2016 թվական

Սամվել Մարտիրոսյան*

Համացանցի ներթափանցումը Հայաստան շարունակում է աճել, նկատվում է նաև բջջային կապի բաժանորդների, շարժական ինտերնետից օգտվողների թվի աճ:

Վերջին մի քանի տարիներին Հայաստանում համացանցի աճը պայթյունային էր[1]: Մյուս կողմից, կարելի է արձանագրել, որ վերջին երկու տարում աճը դանդաղել է և գրեթե կանգ առել:

Ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015թ. տվյալների[2].

- ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը (այդ թվում՝ շարժական 3G և 2G) 2015թ. կազմել է 2.199.771, որը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 5.5%-ով,
- ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը (ներառյալ՝ շարժական 3G) 2015թ. կազմել է 1.520.756:

Ստորև ներկայացվում է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի 2008-2015թթ. աճի դինամիկան (տե՛ս *Նկար 1*)[3].

---

* «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետ:

[1] ՀԱՄԱՑԱՆՑԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12347&sphrase_id=55157

[2] Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի գործունեության հաշվետվություն, http://www.psrc.am/images/docs/reports/Report-2015.pdf

[3] Նույն տեղում:

Նկար 1

Ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի 2008-2015թթ. աճի դինամիկան



Սակայն, եթե դիտարկենք ինտերնետ կապ մատակարարողների, բջջային օպերատորների տվյալները, ապա կտեսնենք, որ վերջին տարում աճը գրեթե դադարել է և կանգ առել:

Ստորև ներկայացնենք հիմնական ցուցանիշները, որոնք վերաբերում են 2016թ. առաջին կիսամյակին: Բոլոր տվյալները վերցված են կազմակերպությունների պաշտոնական հաշվետվություններից, որոնք հրապարակվում են եռամսյակը մեկ և տեղադրվում կազմակերպությունների կայքերում (տվյալները վերցված են 2016թ., եթե նշված չէ, ապա երկրորդ եռամսյակ: Աճը փակագծերում համեմատվում է 2014թ. չորրորդ եռամսյակի տվյալների հետ[4]).

Բջջային կապի բաժանորդագրություններ

Բջջային կապի ընդհանուր բաժանորդների թիվը կազմել է 3 434 396, աճը 2014թ. համեմատ կազմել է 10 160:

Բաշխումն ըստ օպերատորների.

Vivacell - 2 084 162 (-61 304)

Beeline - 863 562 (+86 384)

Ucom (former Orange) - 486 672 (-14 920)

[4] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ 2014Թ. ՏՎՅԱԼՆԵՐՈՎ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13460&sphrase_id=55157

Նկար 2

Բջջային կապի բաժանորդների բաշխումն ըստ օպերատորների, 2016թ. երկրորդ կիսամյակ



Ինտերնետի սպառում. հիմնական տվյալներ.

- Լայնաշերտ կապի բաժանորդագրություններ - 261 784 (+15 395)
- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) - 231 698 (- 25 912)
- Տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ (հեռախոսի միջոցով) - 1 661 946 (+39 229)

Ընդհանուր շարժական ինտերնետի բաժանորդագրություններ. 2 155 428 (+28712)

Տվյալներն ըստ մատակարարների

Armentel

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) - 141 837 (տվյալները՝ 2016թ. առաջին եռամսյակի) (-8 519)

- Շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրություններ - 42 644 (- 1484)
- Տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ (հեռախոսի միջոցով) - 337 895 (+22 957)

Vivacell

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) - 68 231 (տվյալները՝ 2016թ. առաջին եռամսյակի) (- 14 526)
- Տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ (հեռախոսի միջոցով) - 1 059 078 (+6 680)

Ucom

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) - 77 954 (տվյալները՝ 2016թ. առաջին եռամսյակի) (+12 352)
- Բջջային հեռախոսներից ինտերնետից օգտվողները - 120 823 (-9902)
- Բջջային հեռախոսներից ինտերնետից օգտվողները - 264 973 (+9592)

Rostelecom

- Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրություններ - 35 144 (տվյալները՝ 2016թ. առաջին եռամսյակի) (+8 936)

Interactive

- Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրություններ - 5 126 (տվյալները՝ 2016թ. առաջին եռամսյակի) (+1279)

Web

- Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրություններ - 1 185 (տվյալները՝ 2016թ. առաջին եռամսյակի)

Arminco

- Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրություններ - 538 (+162) (տվյալները՝ 2016թ. առաջին եռամսյակի)

Ամենայն հավանականությամբ, ընդհանուր աճի տեմպերի դանդաղումը կապված է երկրի ընդհանուր տնտեսական վիճակի հետ: Կարելի է ենթադրել, որ ինտերնետի ներթափանցումը հասել է Հայաստանի բնակչության աղքատության շեմին. 2014թ. աղքատ էր համարվում բնակչության 30%-ը[5]: Այսինքն՝ սպասել, որ օգտվողների կտրուկ աճ կդիտվի առկա տնտեսական վիճակում, իրատեսական չէ: Ավելի շուտ նկատվում է որակական փոփոխություն օգտվողների շարքերում: Օրինակ, ավելանում են բջջային հեռախոսից ինտերնետ կապից օգտվողները. այստեղ մոտ 40 հազարի աճ է նկատվում, մինչդեռ ընդհանուր բջջային բաժանորդների թիվը մեկուկես տարվա ընթացքում աճել է տասը հազարով:

[5] POVERTY & SHARED PROSPERITY AT A GLANCE: ARMENIA, http://pubdocs.worldbank.org/en/-571721460536864891/Poverty-and-shared-prosperity-at-a-glance-ARM-April-2016.pdf

Տարածաշրջան

ԼՂՀ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. օգոստոս

Հրայր Փաշայան[*]

Ղարաբաղյան հակամարտություն. Օգոստոսին Ղարաբաղյան հակամարտությունը շարունակում էր գտնվել միջազգային քննարկումների օրակարգում: Օգոստոսի 8-ին Բաքվում կայացած Վ.Պուտինի և Ի.Ալիևի հանդիպմանը ՌԴ նախագահին, անդրադառնալով Ղարաբաղյան հակամարտությանը, մասնավորապես նշել է. «Այդ խնդիրը մեզ բաժին է հասել խորհրդային անցյալից: Ես գիտեմ, թե դա որքան սուր հարց է և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի համար: Մենք ձգտելու ենք նրան, որ Հայաստանն ու Ադրբեջանն այնպիսի լուծում գտնեն, որը փոխզիջումային է, սակայն ընդունելի է երկու կողմերի համար: Խնդրի լուծման մեջ չեն լինելու հաղթողներ. հաղթող պետք է լինեն երկու երկրների ժողովուրդները, և երկու պետությունները պետք է զգան, որ նրանք լուծել են այդ բարդ խնդիրը հանուն ներկա և ապագա սերունդների»:

Օգոստոսի 9-ին Վ.Պուտինը Սանկտ Պետերբուրգում հանդիպեց Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի հետ, և պաշտոնապես հայտարարվեց հարաբերություններում առկա ճգնաժամի հաղթահարման մասին: Ուշագրավն այն է, որ այդ հանդիպումից հետո երկրի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն հայտարարեց, թե հանդիպմանը պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկել ԼՂ հիմնահարցն Ադրբեջան-Թուրքիա-Ռուսաստան ձևաչափով: Հանգամանքը, բնականաբար, բացասական արձագանք գտավ հայկական շրջանակներում, քանի որ, ինչպես պատմական փորձն է վկայում, Ադրբեջան պետության հիմնադիր Թուրքիայի կանխակալ միջնորդությունը չի կարող դրական ազդեցություն ունենալ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում:

---

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

Ղարաբաղյան հակամարտությունը քննարկումների առանցքում էր օգոստոսի 10-ին կայացած Սարգսյան-Պուտին հանդիպման ժամանակ: Բանակցություններն ընդհանուր առմամբ ընթացան փակ ձևաչափով, ինչը դժվարացնում է դրանց ընթացքի և արդյունքների վերաբերյալ կոնկրետ գնահատականներ տալը: Բանակցությունների ավարտից հետո Վլադիմիր Պուտինը ճեպազրույցում կրկնեց այն, ինչ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված վերջին շրջանում ասում էր. որ հարկավոր է հիմնահարցի լուծման փոխզիջումային տարբերակ, որպեսզի կողմերից որևէ մեկն իրեն պարտվող, նվաստացած չզգա, որ կողմերի շահերն արծարծվեն ընդունելի տարբերակով: Իսկ Սերժ Սարգսյանն իր հայտարարության մեջ կարևորել էր ընդունելի տարբերակին հասնելու ճանապարհը՝ նկատի ունենալով ձեռք բերված պայմանավորվածությունների հարգումը, ադրբեջանա-ղարաբաղյան շփման գծում հետաքննության մեխանիզմների տեղադրումը, լարվածության սրումը կանխելը, խաղաղ պայմաններում հիմնախնդրի կարգավորմանը հասնելը: Վերլուծաբանների կարծիքով՝ նախագահների կողմից միասնական հայտարարությամբ հանդես չգալը վկայում է այն մասին, որ բանակցություններն, ըստ էության, հաջողություն չեն գրանցել, մանավանդ որ ադրբեջանական կողմը տարբեր ձևերով վիժեցնում է ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը, այդ թվում նաև դեմ է արտահայտվում հետաքննության մեխանիզմների տեղադրմանը:

Օգոստոսին և՛ Հայաստանի, և՛ Արցախի հանրային շրջանակներում ակտիվ քննարկման նյութ դարձավ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում հայկական կողմի տարածքային զիջումների հարցը: Խոսելով թեմայի մասին՝ ԼՂՀ նախագահի տեղեկատվական գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը նշեց, որ տարածքների հանձնման մասին խոսակցություններն իրականում թյուրըմբռնում են, քանի որ խոսքն այստեղ ոչ թե տարածքների հանձնման, այլ սահմանների ճշգրտման մասին է, որը պետք է ընդհանուր դիտարկվի:

Այս համատեքստում ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, պատասխանելով Ֆրանսիայի խորհրդարանի էլեկտրոնային թերթի՝ փոխզիջումների մասին հարցին, ասել է, որ որևէ հակամարտության լուծում, հատկապես երբ դա այնքան բարդ է, որքան Լեռնային Ղարաբաղինը, կարող է իրականացվել միայն փոխզիջումների միջոցով. «Ողջամիտ, արդարացի և համարժեք փոխզիջումներն անհրաժեշտ են»:

Զիջումների մասին հանրային շրջանակներում ծավալված խոսակցություններին վերջ դնելուն էր ուղղված նաև ՀՀ փոխարտգործնախարարի՝ լրագրողների հետ հանդիպմանը հնչեցրած հայտարարությունը: Այս պայմաններում, երբ ադրբեջանական կողմը երբեք չի խոսում իր կողմից զիջումների մասին, կոնկրետացնել, թե հայկական կողմն ինչ զիջումների է գնալու, կոպիտ մարտավարական և ռազմավարական սխալ է, ասել է Շավարշ Քոչարյանը: Նրա խոսքով՝ նման հարցերի մասին խոսելը պարտվողականություն է, քանի որ Բաքուն մինչև հիմա իր կողմից երբեք զիջումների մասին որևէ հայտարարություն չի արել: Երբ որ Բաքուն կխոսի զիջումներից, հնարավոր կլինի նաև խոսել դրանց փոխադարձ բնույթի մասին: Քանի դեռ այնտեղ այդ մասին չեն խոսել, նման հարցեր բարձրացնելը կոռեկտ չէ, ընդգծել է նա:

Օգոստոսի 15-ին Արցախում էր ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրշիկը: ԼՂՀ նախագահի և արտգործնախարարի հետ հանդիպումների առանցքում Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի շփման գծում տիրող իրավիճակի և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի կողմից իրականացվող դիտարկումներին առնչվող հարցերն էին: Երկուստեք կարևորվել է շփման գծում կայունության և հրադադարի ռեժիմի պահպանման անհրաժեշտությունը:

Օգոստոսի կեսերին ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքը հայտնեց, որ կառույցը քայլեր է ձեռնարկում ՀՀ և ԱՀ նախագահների հանդիպում կազմակերպելու ուղղությամբ, սակայն օգոստոսին այդպես էլ հակամարտող կողմերի հանդիպում ոչ Ֆրանսիայում, որը նախապես հայտարարված էր, ոչ մեկ այլ վայրում չկայացավ: Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության ապակառուցողական քաղաքականության հետևանքով, կարելի է ասել, հերթական անգամ հակամարտության կարգավորմանն ուղղված դիվանագիտական քայլերը մտան փակուղի:

Հայաստան-Արցախ. Շարունակվել են Հայաստան-Արցախ համագործակցության խորացմանն ուղղված քայլերը: Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն օգոստոսի 3-ին ընդունել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանին և տնօրենի տեղակալ Սուրեն Պողոսյանին: Քննարկվել են էներգետիկայի ոլորտում երկու հայկական պետությունների համագործակցությանը վերաբերող հարցեր:

Նախագահը պահանջված է համարել նման համագործակցությունը՝ նշելով, որ առկա են լավ նախադրյալներ այն խորացնելու և զարգացնելու համար: Օգոստոսի 8-ին ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ Կենտրոնական բանկի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր, համաձայն որի՝ երկու կառույցներն այսուհետ կիրականացնեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ամբողջական տեղեկատվության փոխանակում: Մասնավորապես, նախկին տարեկան ցուցանիշների փոխարեն, այժմ հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի վերաբերյալ ցուցանիշների հրապարակումը հնարավոր կլինի իրագործել եռամսյակային կտրվածքով: Օգոստոսի 11-ին Արցախում էին Հայաստանի Հանրապետական կուսակցության կանանց խորհրդի անդամները՝ ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ Հերմինե Նաղդալյանի գլխավորությամբ: ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի և ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանի հետ հանդիպումներում քննարկվել են հայկական երկու հանրապետությունների խորհրդարանների միջև փոխգործակցությանը վերաբերող հարցեր: Օգոստոսի 16-ին Արցախում էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պատվիրակությունը՝ կառույցի ղեկավար Արմեն Երիցյանի գլխավորությամբ: ԼՂՀ իշխանությունների և ոլորտի պատասխանատուների հետ հանդիպմանը քննարկվել են հայկական երկու հանրապետությունների համապատասխան գերատեսչությունների միջև կապերի հետագա խորացմանն ու ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցեր: Օգոստոսի 18-ին Արցախում էին ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանն ու ՀՅԴ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ Արմեն Ռուստամյանը: ԼՂՀ իշխանությունների հետ հանդիպումների ընթացքում արծարծվել են հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությանն առնչվող մի շարք հարցեր: Հայկական զույգ պետությունների զինված ուժերի համագործակցության շրջանակներում օգոստոսի 22-ին Արցախում էր գտնվում ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օհանյանի գլխավորած պատվիրակությունը: ԼՂՀ նախագահի և ՊԲ ղեկավարության հետ հանդիպումներում քննարկվել են ոլորտին առնչվող մի շարք հարցեր: Բակո Սահակյանի գլխավորությամբ պաշտոնյաներն այցելել են հանարապետության հարավարևելյան սահմանագծի հատվածներից մեկը, հանդիպել հրամանատարական կազմի հետ, ծանոթացել ծառայության ընթացքին ու տիրող իրավիճակին: Օգոստոսի

24-ին միջբուհական համագործակցության շրջանակներում Արցախ է ժամանել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ: ԼՂՀ նախագահի և ոլորտի պատասխանատուների հետ հանդիպումներում բուհի հետ համագործակցությանն առնչվող հարցեր են քննարկվել:

Արցախ-Սփյուռք. Արցախի Հանրապետությանը և նրա անվտանգության երաշխավոր Պաշտպանության բանակին տարբեր ձևերով օգնելու սփյուռքահայ հայրենակիցների՝ ապրիլին մեկնարկած գործընթացը շարունակվեց օգոստոսին: Հերթական օրինակելի նախաձեռնությունը ՌԴ հայերի միության Ուրդմուրտիայի տարածաշրջանի համահայկական խորհրդինն էր: Առաջնագծի հարավային հատվածում, որտեղ ամառվա տապին ջերմաստիճանն անցնում է 40 աստիճանի սահմանը, ջուրը կարևոր նշանակություն ունի ոչ միայն զինծառայողների սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման, այլև զգոնության բարձրացման ու մարտունակության ամրապնդման համար: Համայնքի մի շարք ներկայացուցիչների նախաձեռնությամբ շուրջ մեկուկես ամիս տևած աշխատանքների արդյունքում իրագործվեց աննախադեպ ծրագիր. ՊԲ մի շարք դիրքերում մշտական ջուրն այլևս իրողություն է: Ծրագիրը շարունակական է լինելու և բարերարների վստահեցմամբ՝ ոչ միայն այս, այլև ամենատարբեր բնագավառներում իրականացվող ծրագրերով փորձելու են օգնել ողջ հայության պատիվն ու արժանապատվությունը դարձած Արցախին ու հզորացնել նրա անվտանգության երաշխավոր բանակին: Օգոստոսի 29-ին Արցախում իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում ռուսաստանաբնակ բարերար Վլադիմիր Ավագյանի միջոցներով մի քանի համայնքներում հանդիսավորությամբ բացվեցին մարզական համալիրներ: Օգոստոսի 31-ին Արցախում էր «Թուֆենկյան» հիմնադրամի պատվիրակությունը և հայտնի ամերիկահայ գրող-հրապարակախոս Քրիս Բոհաջալյանը: ԼՂՀ իշխանությունների հետ հանդիպումների ընթացքում կարևորվել է հիմնադրամի կողմից Արցախում իրականացվող բարեգործական ծրագրերը, որոնք զգալիորեն նպաստում են ԼՂՀ համայնքների զարգացմանը: Հատուկ ուշադրություն է դարձվել մշակութային ոլորտին և կարևորվել Քրիս Բոհաջալյանի զգալի ներդրումը Հայոց ցեղասպանության և համահայկական նշանակություն ունեցող հարցերը միջազգային հանրության շրջանակներում բարձրաձայնելու գործում:

ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ՝ ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ

Հրայր Փաշայան[*], *Լիանա Բալայան*[**]

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տոնացույցում սեպտեմբերի 2-ն առանձնահատուկ տեղ ու դեր ունի: 1991թ. այդ օրը բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների ժողովրդական պատգամավորների համատեղ նստաշրջանը, արտահայտելով ժողովրդի կամքը և երկրում ստեղծված իրավական ու աշխարհաքաղաքական իրողությունները ճիշտ գնահատելով, ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» Հռչակագիրը: 25 տարի առաջ ընդունված պատմական որոշումը հիմնասյունը դարձավ ազատության և անկախության ձգտող արցախահայության համար, որը, բազում խոչընդոտների հանդիպելով, չընկրկեց երբեք:

Շնորհավորելով ողջ հայությանը Հայոց նոր պետականության միջնաբերդը դարձած Արցախի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձի առթիվ՝ Ղարաբաղյան հակամարտության արդի զարգացումների և տարբեր միջազգային կառույցներում հիմնախնդրի կերպարը խեղաթյուրված ներկայացնելու ադրբեջանական քարոզչության համատեքստում կարևորում ենք 1991թ. սեպտեմբերի 2-ի ԼՂՀ հռչակման Հռչակագրի վերլուծությունը՝ փաստաթղթում առկա իրավաքաղաքական փաստարկները ներկայացնելու համար:

Փաստաթղթում առկա են հետևյալ փաստարկները.

1. Պրոֆեսոր Ա.Մանասյանի դիտարկմամբ. «Հռչակագիրը մատնանշում է ինչպես Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից Ադրբեջանի Հանրապետության հրաժարվելու փաստը, այնպես էլ ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների ելքի հետ կապված հարցերի

---

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

[**] Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի:

լուծման մասին» օրենքը: Այսպիսով, Հռչակագիրը ԼՂՀ-ն հռչակում էր ԽՍՀՄ պետականության իրավունքի համատեքստում՝ հղում կատարելով իրավաբանորեն բացառիկ կարևորություն ունեցող Բաքվի՝ Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու փաստին: Այս կարևորությունը բացատրվում է նրանով, որ 1918-1920թթ. ԱԴՀ կազմում չի եղել ո՛չ Լեռնային Ղարաբաղը, ո՛չ Նախիջևանը» [1, c. 49]:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման համար հիմք է հանդիսացել նաև, ինչպես նշված է Հռչակագրի տեքստի առաջին իսկ նախադասությունում. **«...ժողովրդի կամքը, որն ամրագրվել է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂՀ ու Շահումյանի շրջանի իշխանության մարմինների 1988-1990թթ. որոշումներում...»** [2]: Ինչպես հայտնի է, արցախահայությունը բազմիցս է դիմել ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին, հիմնախնդիրն արդարացիորեն՝ մարզի բնակչության իղձերին համապատասխան լուծելու համար: Այդ նպատակով ազգաբնակչության շրջանում բազմաթիվ հարցումներ են իրականացվել, որոնց ընթացքում ժողովուրդը տասնյակ հազարավոր ստորագրություններով հավաստել է Մայր հայրենիքի հետ վերամիավորվելու իր ձգտումը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման փաստարկներից մեկը, ինչպես նշված է Հռչակագրում, հանդիսացել է **Ադրբեջանում տարվող ապարտեիդի և խտրականության քաղաքականությունը, որն ատելության և անհանդուրժողականության մթնոլորտ է ստեղծել հանրապետության հայ ժողովրդի նկատմամբ, ինչը հասցրել է զինված ընդհարումների, մարդկային զոհերի, հայկական խաղաղ գյուղերի բնակիչների բռնագաղթի:** Փաստորեն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման հիմնական փաստարկներից մեկը կապված էր Ադրբեջանական ԽՍՀ պետականակիր ազգերից մեկի իրավունքների խախտման և նրա հետագա գոյության սպառնալիքի հետ: Բանն այն է, որ Ադր. ԽՍՀ մյուս շրջաններում բնակվող շուրջ կես միլիոն հայությունը ենթարկվել է ցեղասպանության կամ դրա սպառնալիքի տակ լքել հայրենի օջախները: Այսինքն՝ անհրաժեշտ էր ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կապահովեին երկրամասի բնակչության գոյությունն ու անվտանգությունը, մանավանդ որ **երկրում ստեղծված վիճակի բարդությունն ու հակասականությունը, Խորհրդային Միության ապագայի, իշխանու-**

թյան և կառավարման միութենական կառուցվածքների ճակատագրի անորոշությունը, ինչպես նշված է Հռչակագրում, այլ հնարավորություն չէին ընձեռում:

4. Միաժամանակ, Հռչակագրում ամրագրված է. **«Հիմնվելով ԽՍՀՄ գործող սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և հավաք ապրող ազգային խմբերին իրավունք են տալիս ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն լուծել իրենց պետական-իրավական կարգավիճակի մասին հարցերը...» [2]:** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին Հռչակագիրն ընդունվել է երկու օր անց այն բանից հետո, երբ Բաքուն 1991թ. օգոստոսի 30-ին ընդունել էր «1918-1920թթ. պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը: Վերջին հանգամանքն իրավական հիմք է տվել արցախահայությանը ձեռնարկել ԽՍՀՄ օրենսդրությամբ իրեն վերապահված քայլեր, որի մասին նշված է Հռչակագրում: Մասնավորապես, **«Մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործում են ԽՍՀՄ սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև այժմ գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին» [2]:** Այս դրույթով, փաստորեն, ամրագրվում էր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դեռևս մնում է ԽՍՀՄ իրավատիրույթում, այն դեպքում, երբ նորաստեղծ ԱՀ-ն, առանց պահպանելու գործող իրավական նորմերը, մասնավորապես՝ առանց անկախության հանրաքվե անցկացնելու, իրեն հռչակեց անկախ, դուրս եկավ ԽՍՀՄ կազմից՝ հրաժարվելով Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից: Դրանով, ըստ էության, ադրբեջանական կողմը փաստաթղթային ձևակերպմամբ չեղյալ հայտարարեց նաև այն վարչական կապը, որը գոյություն էր ունեցել Ադրբեջանական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի միջև:

5. Եթե 1991թ. օգոստոսի վերջերին անկախացման գործընթաց սկսելով (Բաքուն, բացի 1991թ. մարտի 17-ին ԽՍՀՄ պահպանման օգտին կազմակերպված քվեարկությունից, աջակցել է նաև օգոստոսին պետական հեղաշրջման փորձ կատարող ուժերին՝ ԱԴՊԿ-ին), Բաքուն «Պետական

անկախության վերականգնման մասին» հռչակագրով հրաժարվել է Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից [3], ապա Ստեփանակերտն, ընդհակառակը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» Հռչակագրի դրույթների համաձայն՝ մնացել է ԽՍՀՄ իրավատիրույթում՝ օգտվելով. **«...ԽՍՀՄ սահմանադրությամբ ու օրենսդրությամբ հանրապետություններին տրվող լիազորություններից...» [2]:** Այս և Ադր. ԽՍՀ պետականակիր ժողովուրդներից մեկի՝ ադրբեջանահայության անվտանգությունն ապահովելու և սեփական իրավատիրույթում նրանց, ինչպես նաև Բաքվի ռազմաքաղաքական ղեկավարության ռազմական ագրեսիայի արդյունքում իրենց օջախները լքած անձանց քաղաքացիություն և բնակության վայր տրամադրելու պատրաստակամության տեսանկյունից ԼՂՀ-ն հանդիսանում է Ադր. ԽՍՀ իրավահաջորդը [4, էջ 91-95]:

6. 1991թ. սեպտեմբերի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման» Հռչակագիրը, դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեն, 1992թ. հունվարի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» Հռչակագիրը և ժողովրդավարական սկզբունքներով անկախ պետականություն ձևավորելու արցախահայության իրականացրած քայլերն ու ստեղծված իրավիճակը համապատասխանում են նաև գիտականորեն՝ մի շարք միջազգայնագետների կողմից պետականությունը բնորոշող չափանիշներին: Մասնավորապես, Գեորգ Ելինեկի երեք բաղադրիչների տեսության համաձայն, պետականությունը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին. որոշակի սահմաններ ունեցող տարածքի, մշտական և որոշակի բնակչության (ժողովրդի) և սուվերեն իշխանության առկայություն: Գերմանացի իրավագետը գրում էր. «Իրավաբանական ֆիկցիայից խուսափելու և պետության՝ բնական կեցությունը ճանաչելու համար բնական է թվում փնտրել պետության օբյեկտիվ էությունը նրա բաղկացուցիչներից, ըստ երևույթին, իրապես գոյություն ունեցող տարրերում: Այդ տարրերն են՝ տարածքը, ժողովուրդը, իշխողը» [5, c. 103]: Ըստ միջազգայնագետ Զ. Տոդուայի՝ «Բոլոր պետությունները ծնվել են արյամբ: Բայց հետո, որպեսզի չանհետանան, նրանք պետք է ստեղծարար կյանք սկսեն, ստեղծեն տնտեսություն, կառուցեն տներ, ձեռնարկություններ, կազմակերպեն առևտուր, ստեղծեն պայմաններ բնակչության բարեկեցության բարե-

լավման համար: Այլապես, նոր պետության գոյության ժամկետը մեծ չէ...» [6, c. 52.]: Ինքնորոշման իրավունքի իրացման ուղղությամբ իրականացրած ուսումնասիրությունները հայտնի իրավապաշտպան Գ.Ստարավոյտովային թույլ են տվել ձևակերպել հինգ չափանիշներից բաղկացած համախումբ՝ **անտանելի գոյություն, պատմական իրավունք, բնակչության էթնիկական կազմ, ժողովրդական կամարտահայտություն, պատասխանատվություն հետևանքների համար** [7, p. 38-41]: Վերջինս այս չափանիշները մշակել է նախկին ԽՍՀՄ տարածքում գոյություն ունեցող հակամարտությունների (Աբխազիա, Հարավային Օսիա, Ղրիմ, Լեռնային Ղարաբաղ) անմիջական դիտարկման, ինչպես նաև այդ և Էրիթրեայի դեպքերի՝ ԱՄՆ Խաղաղության ինստիտուտում իրականացրած հետազոտության հիման և ինքնորոշման միջազգային իրավունքի նորմերի վրա: Համապատասխան չափանիշները ներկայացված են նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Օրինակ, Մոնտեվիդեոյի 1933թ. կոնվենցիայում ամրագրված են պետության հետևյալ չորս չափանիշները. մշտական բնակչություն, որոշակի տարածք, սեփական կառավարություն, այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն [8]: «Ագրեսիայի սահմանում» բանաձևի հեղինակները նույնպես Հոդված 1(a)-ում հեռատեսորեն գրել են, որ դրանում «պետություն» տերմինը «կիրառվում է՝ չկանխորոշելով ճանաչման մասին հարցը կամ հարցն այն մասին, թե արդյո՞ք պետությունը Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ է հանդիսանում» [9]:

Այս ամենը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 25-ամյա գոյությունը, ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող պետականության կառուցումը և արտաքին մարտահրավերներին դիմակայելու նրա ունակությունը հստակորեն վկայում են, որ ԼՂՀ-ն համապատասխանում է պետականության՝ գիտության մեջ և քաղաքական պրակտիկայում առկա չափանիշներին [10, p. 23]:

Հատկանշական է, որ Բաքվի որդեգրած ցեղասպան քաղաքականությունը, անհիմն տարածքային հավակնությունները և ԼՂՀ-ի դեմ սանձազերծած պատերազմը «չթույլատրեցին» Բաքվի իշխանություններին ընդունելու անկախ պետականություն ստեղծելուն ուղղված այնպիսի իրավաքաղաքա-

կան ակտեր, որոնք ամուր և օրինական կդարձնեին Ադրբեջանի Հանրապետության ձևավորման իրավական հիմքերը: Ի տարբերություն Ադրբեջանի Հանրապետության, ԼՂՀ հռչակումը լիովին համապատասխանել է ինչպես խորհրդային օրենսդրությանը, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերին: Այս առումով, Ղարաբաղյան հակամարտությունը շահեկանորեն առանձնանում է հետխորհրդային տարածքի մյուս հակամարտություններից: Ըստ երևույթին, դա է հիմք տվել ՀՀ-ում ՌԴ առաջին դեսպան Վ.Ստուպիշինին համոզմունք հայտնել, որ Լեռնային Ղարաբաղի դեպքը ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման մեր օրերի դասական օրինակներից մեկն է [11, c. 165]:

Աղբյուրներ և գրականություն

1. *Манасян А.,* Карабахский конфликт: международно признанные основания проблемы (папка основных и политических документов), Степанакерт, 2007.
2. «Հայաստանի Հանրապետություն», N 186, 3.09.1991:
3. «Бакинский рабочий», 3 сентября 1991г.
4. *Փաշայան Հ.,* ԼՂՀ-ն որպես Արևելյան Անդրկովկասի հայության (ադրբեջանահայության) իրավունքների երաշխավոր (Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր), Ստեփանակերտ, 2010, թիվ 1 (21):
5. *Еллинек Г.,* Общее учение о государстве, СПб, 1908.
6. *Тодуа З.,* Экспансия исламистов на Кавказе и в Центральной Азии, М., 2006.
7. *Starovoitova G.,* Soveregnity after Impire. Self-Determination Movements in the Former Soviet Union. Institut of peace (USA), 1996.
8. Rights and Duties of States-Convention Signed at Montevideo, December 26, 1933, http://www.mtholyoke.edu/acad/intrel/interwar/rights.htm (Конвенция Монтевидео по правам и обязанностям государств, стат. 3097; Серия договоров 881; 165 Серия договоров ООН 19, декабрь 26, 1933).
9. Ագրեսիայի սահմանում. 1974թ. դեկտեմբերի 14-ին ՄԱԿ ԳԱ ընդունած բանաձևը. № 2214 (XXIX).
10. Հրապարակային միջազգային իրավունք և քաղաքականություն մշակող խումբ և Միջազգային իրավունքի ու քաղաքականության կենտրոն (Նոր Անգլիա): Ղարաբաղյան ճգնաժամ: Կարգավորման պլան, 2000, http://www.ejil.org/journal/Vol9/No3/090491.pdf
1. *Ступишин В.,* Моя миссия в Армении, М., 2001.

ԱԴՐԲԵՋԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. օգոստոս

Անուշավան Բարսեղյան[*]

Ադրբեջան-Ռուսաստան-Իրան. Օգոստոսի 8-ին ՌԴ, Իրանի և ԱՀ նախագահների միջև Բաքվում կայացած առաջին եռակողմ հանդիպումը կարելի է համարել Ադրբեջանի արտաքին հարաբերություններում այս ամսվա ամենակարևոր իրադարձությունը: Ամենաբարձր մակարդակով կայացած բանակցությունները նպատակ ունեն երկրների միջև հաստատել համագործակցության նոր ձևաչափ, որին նախորդել էր ՌԴ, Իրանի և ԱՀ արտգործնախարարների ապրիլյան հանդիպումը: Կողմերը կարևորել են նոր ուրվագծվող ձևաչափը, որը հնարավորություն կտա խորհրդակցություններ անցկացնել տարածաշրջանային և գլոբալ հարցերի շուրջ, ինչպես նաև համակարգել առկա մոտեցումները:

Բանակցությունների արդյունքում ընդունված հռչակագիրն արտացոլում է ընդհանուր հետաքրքրությունների շրջանակը, այն է՝ պայքարն ահաբեկչության, ծայրահեղականության, վերազգային կազմակերպված հանցագործության, թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառության, թրաֆիկինգի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ: Կողմերն արձանագրել են նաև, որ տարածաշրջանում առկա չկարգավորված հակամարտություններն էական խոչընդոտ են հանդիսանում տարածաշրջանային համագործակցության համար և նշել են դրանց շուտափույթ խաղաղ կարգավորման կարևորությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հիման վրա:

Իրանի նախագահ Հ.Ռոուհանին առաջարկել է հաջորդ հանդիպումն անցկացնել Իրանում:

Բաքվում կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի, էներգետիկ համագործակցության, Կասպից ծովի կարգավիճակի և Սիրիայի շուրջ ստեղծված ճգնաժամի հետ կապված հարցեր: Ադրբեջանում հատկապես մեծ են ակնկալիքները

[*] «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

տրանսպորտային նախագծի իրականացումից, որն, ըստ Ի.Ալիևի, հնարավորություն կտա ստանալ տարեկան հարյուրավոր միլիոն դոլար եկամուտ: Բացի դրանից, Բաքուն, դառնալով տարանցիկ կարևոր երկիր ՌԴ-ի և Իրանի միջև, հույս ունի ստանալ նաև քաղաքական շահաբաժիններ:

Տնտեսական համագործակցության մյուս հարցերը հիմնականում քննարկվել են երկկողմ ձևաչափերով: Մասնավորապես, ռուս-ադրբեջանական բանակցությունների արդյունքում ՌԴ փոխվարչապետ Դ.Ռոգոզինը հայտարարել է Ադրբեջանում ավիացիոն գործարանի բացման հեռանկարի մասին, որտեղ կիրականացվեն ռուսական արտադրության ինքնաթիռների և ուղղաթիռների մոդեռնիզացիան և սպասարկումը:

Սույն հայտարարությունից օրեր անց ռուսական *«Вертолеты России»* հոլդինգի գլխավոր տնօրենի տեղակալ Ի.Չեչիկովը հայտարարել է Ադրբեջանում *Ми-8/17* ուղղաթիռների վերանորոգման կենտրոնի բացման ծրագրի մասին: Նշված հոլդինգը նախատեսում է *Silk Way Helicopter Services* ընկերության հիմքի վրա սպասարկման կենտրոնի բացումը: Միաժամանակ քննարկվում է այդ կենտրոնի հնարավորությունների ընդլայնման հարցը, որի արդյունքում հնարավոր կլինի իրականացնել նաև ռազմական ուղղաթիռների տեխնիկական սպասարկումը և հիմնային վերանորոգման աշխատանքները:

Ադրբեջանի համար կարևոր նշանակություն ունի նաև ռուսական *«Р-Фарм»,* ադրբեջանական *«Vita-A»* և Ադրբեջանի ներդրումային գործակալության միջև ստորագրած արձանագրությունը դեղագործական համատեղ արտադրություն հիմնելու մասին, որը շահագործման կհանձնվի 2018թ. (նախագիծը, նախնական հաշվարկների համաձայն, ենթադրում է 47 մլն եվրոյի ներդրում): Այս հարցը Բաքվի համար հրատապ է, քանզի Ադրբեջանը գրեթե 100%-ով ներկրում է երկրում սպառվող դեղորայքը:

Ռուս-ադրբեջանական հարաբերություններում մյուս ուշագրավ զարգացումները վերաբերում են ռազմատեխնիկական համագործակցությանը: ՊՆ նախարարների մի քանի օրվա ընթացքում կատարած փոխադարձ այցելությունները վկայում են ոլորտին առնչվող հրատապ հարցերի գոյության մասին: Ռուսական ԶԼՄ-ի փոխանցմամբ, ՌԴ ՊՆ նախարար Ս.Շոյգուն և ԱՀ ՊՆ նախարար Զ.Հասանովը քննարկել են ռուսական սպառազինության մատակարարման և Կասպյան տարածաշրջանում անվտանգության կոլեկտիվ համակարգի ստեղծման հետ կապված հարցեր: Հնարավոր է, խոսքը ռազմա-

տեխնիկական համագործակցության շրջանակներում մի քանի տարի առաջ կնքված խոշոր գործարքի որոշակի վերանայման մասին է: Ռուսական աղբյուրը հայտնում է Ми-35 ռազմական ուղղաթիռներ գնելու Ադրբեջանի ցանկության, ինչպես նաև օպերատիվ-տեխնիկական հրթիռների և անօդաչու թռչող սարքերի դեմ արդյունավետ պայքարող *«Панцирь»* հրթիռային համակարգերի նկատմամբ հայտնած հետաքրքրվածության մասին:

Ադրբեջանական լրատվամիջոցների հրապարակումների համաձայն, չի բացառվում, որ բանակցությունների առարկա կարող է դառնալ Ադրբեջանի տարածքում ռուսական նոր ռադիոտեղորոշիչ կայանի կառուցման հարցը, որը Մոսկվայի համար առավել հրատապ է դարձել Սիրիայում Ռուսաստանի կողմից իրականացվող ռազմական գործողությունների համատեքստում:

Ռուսաստանի և Ադրբեջանի միջև ընդլայնվում է նաև համագործակցությունը ռազմական կրթության ոլորտում: ՌԴ ՊՆ փոխնախարար Ա.Անտոնովի հայտարարության համաձայն, ներկայում ՌԴ ՊՆ զինվորական ձեռնարկություններում սովորում է ԱՀ ԶՈւ 65 զինծառայող, այս տարի նախատեսվում է ընդունել արդեն 88 զինվորականի:

Այս տարվա հոկտեմբերին նախատեսվում է Ադրբեջանի և ՌԴ-ի միջև ռազմատեխնիկական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի նիստը Մոսկվայում:

Եռակողմ հանդիպումների ընթացքում իրանական ընկերությունների հետ ստորագրված արձանագրությունները նույնպես ենթադրում են դեղորայքի համատեղ արտադրության ծրագրերի իրագործում, հաստատվել են նաև ավտոմեքենաների և քիմիական արտադրության համատեղ ծրագրեր:

Մինչ Հ.Ռոուհանիի այցը, Բաքվում ամենաբարձր մակարդակով ընդունել են Իրանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Մ.Վաեզիին, որն Իրան-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովի համանախագահն է:

ԱՀ և Իրանի կառավարությունների համապատասխան կառույցների միջև ստորագրվել են «Հարավ-հյուսիս» միջազգային տրանսպորտային միջանցքի իրականացման ոլորտում համագործակցության մասին արձանագրությունը, էլեկտրոնային անվտանգության և ստանդարտիզացիայի ոլորտներում համագործակցության և փոխըմբռնման հուշագրերը:

Ի դեպ, բացի Ռեշտ-Աստարա (Իրան)-Աստարա (Ադրբեջան) երկաթուղային ճանապարհից, ըստ Ադրբեջանում Իրանի դեսպան Մ.Պակայինի, այս տարվա աշնանը շահագործման կհանձնվի իրանական Մեշխեդ քաղաքը Նախիջևանի հանրապետությանը կապող երկաթուղին:

ԱՀ էկոնոմիկայի նախարար Շ.Մուստաֆաևը հայտարարել է, որ Ադրբեջանի և Իրանի միջև փոխհարաբերությունները երբեք այսքան սերտ չեն եղել, որքան հիմա: Ըստ նրա, Իրանի ներդրումներն Ադրբեջանում կազմում են $2,5 մլրդ, որից $150-ը՝ ոչ նավթային ոլորտում, երկրում գործում է իրանական կապիտալով 450 ընկերություն, 2016թ. առաջին կիսամյակում անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 66%-ով աճել է ապրանքաշրջանառությունը: Շ.Մուստաֆաևի և Իրանի հանքարդյունաբերության, արդյունաբերության և առևտրի նախարար Մ.Նեմատզադեի հանդիպման շրջանակներում ադրբեջանական *AzEuroCar* և իրանական *Iran Khodro* ընկերությունները փաստաթղթեր են ստորագրել Ադրբեջանի տարածքում ավտոմոբիլների արտադրության համատեղ գործարանի հիմնման վերաբերյալ: Նախագիծը գնահատվում է $15 մլն, որի 25%-ը կներդնի իրանական կողմը: Ապագա գործարանում տարեկան կթողարկվեն 10 հազար հատ *Samand, Soren, Dena* և *Runna* մակնիշների ավտոմեքենաներ:

Էներգետիկ համագործակցության շրջանակներում, ԻԻՀ Էներգետիկայի նախարար Խ.Ֆալահաթիանի հայտարարության համաձայն, Իրանը սկսել է 500 մվտ էլեկտրաէներգիայի ներկրումն Ադրբեջանից: Հ.Ռոուհանիի այցի ընթացքում երկու երկրների էներգահամակարգերը պաշտոնապես սինքրոնացվել են:

Ադրբեջան-Թուրքիա. Հուլիսին Թուրքիայում հեղաշրջման փորձի ընթացքում խորհրդավոր դադար վերցրած ԱՀ իշխանությունները դրա ձախողումից հետո փորձում են ամեն կերպ իրենց հավատարմությունը ցուցադրել Ռ.Էրդողանին: Այդ նպատակով բոլոր ուժերը նետվել են «բացահայտելու» Ադրբեջանում գործող գյուլենական կազմակերպություններին և անձանց: Ընդհանուր հրահանգն իջեցվել է ԱՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, արտաքին կապերի բաժնի վարիչ Ն.Մամեդովի միջոցով, որն «սպառնացել» է բացահայտել Ադրբեջանում Ֆ.Գյուլենի բոլոր կողմնակիցներին, որոնցից շատերն, ըստ նրա, լայն կապեր ունեն ընդդիմադիր կառույցների հետ:

Իսկ ԱՀ գլխավոր դատախազության ծանր հանցագործությունների քննչական վարչությունում քրեական գործ է հարուցվել Ֆ.Գյուլենի կողմնակից-

ների նկատմամբ, որի շրջանակներում իրականացվում են օպերատիվ-քննչական գործողություններ: Դրան նախորդել էր լրագրող, haqqin.az կայքէջի գլխավոր խմբագիր Է.Ֆաթուլաևի լրագրողական «անկախ» հետաքննությունը, որի համաձայն՝ գյուլենականներն իբր պետական հեղաշրջում էին նախապատրաստել Ադրբեջանում:

Նուրսիստների նկատմամբ հայտարարված «որսի» արդյունքում զանգվածային կերպով աշխատանքից հեռացվել են Բաքվի «Կովկաս» համալսարանի գյուլենական համարվող պրոֆեսորներ, ամբիոնի վարիչներ, դեկաններ (ընդհանուր թվով մոտ 50 հոգի, բոլորն էլ Թուրքիայի քաղաքացի), ինչպես նաև համալսարանի պրոռեկտոր Շ.Նաբիևը, որն ԱՀ քաղաքացի միակ բարձր պաշտոնյան էր այդ հաստատությունում:

Թուրքիայում Ֆ.Գյուլենի հետ ունեցած կապերի մեղադրանքով ձերբակալվել են «*Petkim Petrokimya Holding A.Ş.*» ընկերության կալանավորված 25 աշխատակիցներից 13-ը, որոնց թվում կան նաև ԱՀ քաղաքացիներ, մասնավորապես *«SOCAR Turkiye»* ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Ի.Մեհմեդօղլուն, հանրության հետ կապերի բաժնի վարիչ Մ.Թաշլիջալին, կադրերի բաժնի վարիչ Ռ.Ֆարաջևը և ևս երկու հոգի:

Հարկ է նշել, որ տարիներ շարունակ իշխանությունները չեն խոչընդոտել Ադրբեջանում նուրսիստական դպրոցների, ինստիտուտների և լրատվամիջոցների գործունեությանը, իսկ բազմաթիվ գյուլենականներ բարձր պաշտոններ են զբաղեցրել պետական համակարգում: Նուրսիստների հիմնական խոսափող հանդիսացող «Խազար» հեռուստաընկերությունը (*Xəzər TV*) նախընտրական գործընթացներում մշտապես աչքի է ընկել իշխանամետ քարոզչությամբ: Սակայն ստեղծված իրավիճակում ԱՀ իշխանությունները փորձում են Ֆ.Գյուլենի հետ կապերի մեղադրանքներն ուղղել դեպի ընդդիմադիրները, հատկապես ԱՀ Ազգային ճակատ կուսակցության առաջնորդ Ա.Քերիմլին, հարմար առիթն օգտագործելով այլախոհների նկատմամբ հերթական ճնշումներ բանեցնելու համար:

Ադրբեջան-Վրաստան. Որոշակի դադարից հետո օգոստոսը կրկին հարուստ էր Ադրբեջանի և Վրաստանի բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելություններով:

Մեկօրյա այցով Բաքու ժամանած Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին ԱՀ նախագահի և վարչապետի հետ քննարկել է էներգետիկ և տրանս-

պորտային համագործակցությանն առնչվող հարցեր, ինչպես նաև տարածաշրջանում առկա հակամարտությունների կարգավորման հեռանկարները:

Թբիլիսի ժամանած ԱՀ արտգործնախարար Է.Մամեդյարովին ընդունել են Վրաստանի վարչապետը, խորհրդարանի նախագահ Դ.Ուսուպաշվիլին և արտգործնախարար Մ.Ջանելիձեն:

Գ.Կվիրիկաշվիլու հետ հանդիպման ընթացքում շեշտվել է Հարավային գազային միջանցքի ռազմավարական նշանակությունը, ընդգծվել այդ ուղղությամբ իրականացվող տարածաշրջանային նախագծերի և երկու երկրների համագործակցության կարևորությունը: Քննարկվել է նաև Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու վրացական հատվածում իրականացվող աշխատանքների ընթացքը:

Արտգործնախարարների հանդիպման ընթացքում նշվել է, որ կողմերը պատրաստվում են ստորագրել տարբեր ոլորտներում համագործակցությունը խորացնելուն ուղղված 15 փաստաթուղթ:

Բաքու է այցելել Վրաստանի Պետական անվտանգության ծառայության պետ Վ.Գոմելաուրիի ղեկավարած պատվիրակությունը, որին ընդունել է նաև Ի.Ալիևը: ԱՀ պետական անվտանգության ծառայության ղեկավար Մ.Գուլիևը և Վ.Գոմելաուրին ստորագրել են երկու կառույցների միջև համագործակցության հուշագիր:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

*Տաթևիկ Հայրապետյան**

Այս տարվա ապրիլի սկզբին Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ի դեմ լայնամասշտաբ ռազմական գործողությունների ձեռնարկումը մեծ ոգևորություն էր առաջ բերել ադրբեջանական հասարակության ներսում: Իլհամ Ալիևի և նրա վարչակարգի հռետորաբանության հիմքում ընկած այն դրույթը, թե Ադրբեջանը միանգամայն հավանական է համարում Ղարաբաղյան հակամարտության լուծման ռազմական ուղին, դրվում էր կիրառության մեջ: Ռազմական գործողությունների վերսկսման առաջին օրերին ադրբեջանական հասարակության ներսում առկա պատերազմական էյֆորիան խախտվում էր հատուկենտ ադրբեջանցիների՝ խաղաղության վերաբերյալ կոչերով: Ովքե՞ր էին խաղաղության կոչ անողները, ինչպե՞ս էին նրանք ընկալվում Ադրբեջանում, և ինչո՞ւ է ադրբեջանական հասարակությունն այդքան անհանդուրժող խաղաղության հանդեպ: Սույն հոդվածի նպատակն է անդրադառնալ վերոնշյալ հարցերին՝ փորձելով ներկայացնել այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով Ադրբեջանում չի կարելի խոսել խաղաղության մասին:

Լայնամասշտաբ ռազմական գործողությունների վերսկսման առաջին օրերին ադրբեջանցի գրող և հրապարակախոս Խասանի Հազն իր անձնական բլոգում գրառում էր կատարել՝ նշելով. «Խնդիրը խաղաղության և պատերազմի միջև ընտրություն անելու մեջ չէ, նման երկընտրանք չի կարող լինել: Այդ երկընտրանքը պետական քարոզչական մեքենան է ստեղծել: Հենց այդ նույն քարոզչամեքենայի գործունեության հետևանքով Ադրբեջանում այլևս ոչ մեկը չի համարձակվելու խաղաղություն պահանջել, քանի որ այդպիսիք կորակվեն որպես «հայրենիքի դավաճան», «թշնամի» և կմեղադրվեն «հայանպաստ» լինելու մեջ»… Արդյունքում՝ խաղաղություն ցանկացողները դիտվում են որպես «ոչ մերոնքական», «արտաքին ուժեր», նրանք համարվում են «մեզանից»

* Պատմական գիտությունների թեկնածու:

ու իրականությունից կտրվածներ»[1]: Այդ նույն ժամանակահատվածում մեկ այլ ադրբեջանցի գրող Սեյմուր Բայջանը ընդդիմադիր, արտերկրում գործող *Meydan.tv* լրատվամիջոցում հրապարակած իր հոդվածում ևս արձանագրում է. «Տարօրինակ է՝ բանակում տարածված «առա՛ջ, Ադրբեջանի զինվոր» գոռացող անձի հայրենասիրության վրա չեն կասկածում, ավելին, փառաբանում են, սակայն խաղաղություն ցանկացողին կասկածում են: Երկերեսանիությամբ առաջնորդվող հասարակության համար դա նորմալ վերաբերմունք է: Որովհետև նրանք չեն հավատում մարդու մտքի անկողմնակալությանը: Ստրուկների համար ազատ մարդ չկա: Նրանք կարծում են, որ եթե մարդ պատերազմ չի ցանկանում, հաստատ շահ, նպատակ ունի, կամ սովորական լեզվով ասած՝ խեր ունի...»[2]: Ադրբեջանում խաղաղության կոչով հանդես եկողների թիվը մեծ չէր, հատուկենտ հրապարակախոսներ, որոնք ապրում և ստեղծագործում են Ադրբեջանի սահմաններից դուրս: Ավելին, հակահիշխանական ուժերը՝ հանձին Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության ղեկավար Ալի Քերիմլիի, մեղադրում և քննադատում էին Իլհամ Ալիևին ռազմական գործողությունները դադարեցնելու և զինադադարը վերականգնելու համար: Ադրբեջանական հասարակությունը հիասթափված էր, քանի որ տարիներ շարունակ «խոստացված» ռազմական գործողությունները չշարունակվեցին:

Ադրբեջանում պետական մակարդակով քարոզվող ռազմական և հակահայկական հռետորաբանության և դրա հետևանքով անհանդուրժող հասարակության ձևավորման մասին բազմիցս է խոսվել և գրվել, այդուհանդերձ, ապրիլյան իրադարձությունները մեկ անգամ ևս եկան մատնանշելու այն լուրջ խնդիրները, որոնք մեծապես խոչընդոտում են խնդրի խաղաղ կարգավորմանը: Փաստացի, ադրբեջանական քարոզչամեքենան ոչ միայն պատերազմի է պատրաստում սեփական հասարակությանը, այլև արգելում է խաղաղության վերաբերյալ հատուկենտ կոչերի հնչեցումն ու նման դիսկուրսի առաջքաշումը: Ադրբեջանում պատերազմել չցանկանալն իսկ համարվում է դավաճանություն:

Ադրբեջանական հասարակության անհանդուրժողականության ակունքները կարելի է գտնել դեռևս 20-րդ դարասկզբին կովկասյան թաթարների շրջանում քարոզվող ազգայնական գաղափարախոսություններում, ինչ-

[1] *Hass X.,* “Başın sağ olsun, vətən”, “Vətən sağ olsun, şəhid”, 4.04.2016, http://xaqanihass.tumblr.com/post/142193500821, 3.08.2016.

[2] *Baycan S.,* Ən bağışlanmaz günah, 11.04.2016, https://www.meydan.tv/az/site/authors/13524/, 2.08.2016.

պես նաև 1905-1906թթ. հայ-թաթարական բախումներում: 1980-կանների վերջին՝ վերակառուցման և հրապարակայնության գաղափարախոսության ներքո, ինչպես միութենական այլ հանրապետություններում, Ադրբեջանում ևս նկատվում էր ազգայնականության վերելք: Այդուհանդերձ, ինչպես 20-րդ դարասկզբին, 1980-ականներին ևս հենց հայերի հետ հակասությունները դարձան յուրատեսակ կատալիզատոր և ազդակ ադրբեջանական ազգայնական տրամադրությունների ակտիվացման գործընթացում: Ի հայտ եկող քաղաքական ուժերի միջև ընթացող պայքարում աստիճանաբար դուրս մղվեցին այն չափավոր գործիչները և մտավորականները, որոնք որոշակիորեն հավանական էին համարում հայերի հետ հաշտեցման և դարաբաղյան հարցի խաղաղ կարգավորման հնարավորությունը: Փաստացի, Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ Ադրբեջանի քաղաքական դաշտում առկա ծայրահեղական տրամադրությունների հետևանքով ի սկզբանե բացառվեց խաղաղության հաստատումը: Ավելին, անկախացման գործընթացներում մտավորականության ոչ բավարար ներգրավվածությունը բացասական հետևանքներ ունեցավ Ադրբեջանի հասարակական կյանքի համար: Ազգայնականության վերելքի աճի պայմաններում մտավորականությունն այն ուժն էր, որը կարող էր արգելք հանդիսանալ բռնությունների կիրառման ճանապարհին: Զուգահեռներ անցկացնելով կարելի է պնդել, որ ներկայիս Ադրբեջանում դեմոկրատիայի և ազատ խոսքի բացակայությունը խոչընդոտում է բազմակարծության և հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը, ինչի հետևանքով բացառվում են ԼՂՀ հայ բնակչության հետ երկխոսության հաստատման փորձերը, լռեցվում է խնդրի խաղաղ կարգավորման համակիրների ձայնը և գերիշխում է ռազմատենչ հռետորաբանությունը: Հարկ է նշել նաև, որ հակահայկական հռետորաբանությունն ուժեղացել է Իլհամ Ալիևի նախագահության տարիներին: Դրա վառ ապացույցն է Ադրբեջանում մարդասպան Ռամիլ Սաֆարովի հերոսացումը:

Ապրիլյան դեպքերի օրերին ադրբեջանական հասարակության ներսում առկա անհանդուրժողականության խնդիրներին անդրադառնալով՝ ադրբեջանցի պատմաբան Սաբիր Ախունդովն իր «Ադրբեջանականություն» վերտառությամբ հոդվածում նշում է, որ գլխավոր պատճառը հետխորհրդային պետական քարոզչությունն է, որի հիմքը դրվում է դպրոցական դասագրքերում ներկայացվող պատմության միջոցով: «Ներկայացվող պատմության միջոցով

ձևավորվում է զոհի հոգեբանությունն ադրբեջանցի երեխայի մեջ, որը զուգահեռվում է թշնամու կերպարի ներկայացմամբ, և դա տարեցտարի ավելի վառ երանգներ է ստանում: Աշակերտները պետք է իմանան, որ հայերի թշնամական քաղաքականությունը դարավոր պատմություն ունի և մշտապես իրականացվելու է ադրբեջանցիների դեմ: Որևէ խաղաղ համակեցության մասին խոսք լինել չի կարող աշակերտների համար…»,- գրում է Ախունդովը[3]: Այսպիսով, ադրբեջանցի երեխայի մեջ սերմանվում է անհանդուրժողականությունը հայի և խաղաղության նկատմամբ: Հարց է առաջանում. իսկ արդյոք Ադրբեջանում կա՞ն դպրոցական դասագրքերում ներկայացվող պատմության այլընտրանքային տարբերակներ, որոնց միջոցով կարող է փոքր-ինչ հնարավոր դառնալ խաղաղության ընկալումն ադրբեջանական հասարակության մեջ: Ադրբեջանցի լրագրող Գյունահ Ռզաևան *Meydan.tv* կայքում հրապարակած իր հոդվածում, անդրադառնալով հետխորհրդային ադրբեջանական գրականության մեջ հակապատերազմական աշխատությունների ստեղծմանը, գրում է, որ վերջին տարիներին գրականության մեջ նկատվում է որոշակի լճացում. ղարաբաղյան թեմայի վերաբերյալ արժեքավոր աշխատությունների թիվը շատ քիչ է[4]: Այդ հարցի առնչությամբ Ադրբեջանի գրողների միության ղեկավարներից Ռաշադ Մյաջիդը 2010թ. հոկտեմբերի իր հարցազրույցներից մեկում նշել է. «Պատերազմի վերաբերյալ լուրջ աշխատությունների բացակայությունը հոգեբանական պատճառներ ունի: Նախ, պատերազմը դեռ չի ավարտվել, մենք դեռ չենք հաղթել: Ուստի գրողները որոշակի սթրես են տանում, նրանց շրջանում նկատվում է հոգեկան անկում: Իսկ այդ հոգեվիճակում հնարավոր չէ հաղթական ոգով աշխատություններ հրապարակել»[5]: Սա պետական քարոզչամեքենայի գործունեության հերթական դրսևորումն է. պատերազմն ավարտված չէ, և ադրբեջանցիներն սպասում են իրենց հաղթանակին:

Նշենք, որ այլընտրանքային աղբյուրների շարքից հատկապես արժեքավոր է Աքրամ Այլիսլիի՝ 2012թ. հրապարակած «Քարե երազներ» վիպակը, որտեղ խոսվում է 1919 թվականին Բաքվում և Ագուլիսում հայերի դեմ իրակա-

[3] *Akhundov S.,* “Azerbaijanism”, 3.08.2016, https://www.opendemocracy.net/od-russia/sabir-akhundov/azerbaijanism, 5.08.2016.

[4] *Рзаева Г.,* Антивоенные нарративы в постсоветской азербайджанской литературе, 20.06.2016, https://www.meydan.tv/ru/site/culture/15160/, 03.08.2016.

[5] *Telmanqizi S.,* Yaziçilar “Qarabağin qara bəxti”ndən yazmağa həvəsli deyil, 23.10.2010, http://musavat.com/news/qarabag-xeberleri/yazicilar-qarabagin-qara-bextinden-yazmaga-heveslideyil_87726.html, 02.08.2016.

նացված կոտորածի մասին: Սակայն հեղինակը քարկոծվեց Ադրբեջանում, նրա աշխատությունները հրապարակավ այրվեցին, նա զրկվեց «Ադրբեջանի ժողովրդական գրող» կոչումից և պետական կենսաթոշակից: Հեղինակի դեմ հետապնդումները շարունակվում են մինչ օրս[6]:

Ապրիլյան դեպքերից հետո առանձնակի ակտիվացում է նկատվում բանակցային գործընթացում, լրատվամիջոցները և վերլուծաբանները ներկայացնում են կարգավորման այն հնարավոր տարբերակները, որոնք առաջ են քաշվում ներկայում: Սակայն, խնդրի խաղաղ կարգավորման քաղաքական փնտրտուքներին զուգահեռ, կարևոր է հասարակություններին նախապատրաստել խաղաղության: Թեև ապրիլյան դեպքերից հետո Իլհամ Ալիևը խուսափում է ակնհայտ պատերազմական կոչեր անելուց, սակայն ադրբեջանական քարոզչության հիմնական դրույթները շարունակում են հնչեցվել պաշտպանության նախարար Զաքիր Հասանովի և այլ պաշտոնյաների կողմից:

Փաստացի, ադրբեջանական հասարակության ներսում չկա խաղաղության դիսկուրս, հայի հետ համակեցությունն անհնար է համարվում, ոչ պատերազմելու կոչ անողները դիտվում են որպես դավաճաններ, ուստի խաղաղ կարգավորման փորձերը լուրջ հաջողությունների չեն հանգեցնում:

Ամփոփելով՝ նշենք, որ Ադրբեջանում շարունակվող ռազմատենչ քարոզչությունը և զինումն ամբողջությամբ հակասում են խաղաղ բանակցությունների տրամաբանությանը՝ հիշեցնելով գերմանացի հեղինակ Էրիխ Ռեմարկի հայտնի խոսքերը. «Նրանք կառուցում են ռազմական գործարաններ և վստահեցնում, որ խաղաղություն են ցանկանում… Ստահոդ հռետորաբանություն»: Իսկ իրական զարգացումները գալիս են փաստելու, որ Ադրբեջանում խաղաղության մասին խոսելն իսկ դիտվում է որպես դավաճանություն:

[6] Author Akram Aylisli responds to 'hooliganism' charge after airport detention, 4.04.2016, https://www.theguardian.com/books/2016/apr/04/author-akram-aylisli-responds-to-hooliganism-charge-after-airport-detention, 3.08.2016.

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. օգոստոս

Ջոնի Մելիքյան[*]

Ի տարբերություն խորհրդարանական ընտրությունների շեմին Վրաստանի ներքաղաքական կյանքում տիրող ակտիվության, արտաքին քաղաքական գործունեությունն անցած օգոստոսին այնքան էլ հարուստ չի եղել իրադարձություններով: Եվ այնուամենայնիվ, ամիսն աչքի ընկավ երկրի ղեկավարության մի շարք արտասահմանյան ուղևորություններով: Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլին օգոստոսի 7-ին այցելեց Բրազիլիա, մեկօրյա պաշտոնական այցով Ադրբեջան մեկնեց երկրի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին (օգոստոսի 31): Վրաստան այցելություններն ավելի մեծաթիվ են եղել. պաշտոնական այցով երկիր է եկել Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը (օգոստոսի 1), պաշտոնական այցով Վրաստանում է եղել նաև Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը (օգոստոսի 29): Օգոստոսի 26-ին Վրաստան է այցելել Եվրոպական ժողովրդական կուսակցության փոխնախագահ Դևիդ Մաքալիստերը:

Նշենք, որ Բրազիլիա կատարած այցելության շրջանակներում Վրաստանի նախագահը և առաջին տիկինը տարբեր պետությունների ղեկավարների հետ միասին մասնակցել են 31-րդ ամառային օլիմպիական խաղերի բացման արարողությանը Ռիո դե Ժանեյրոյում: Վրաստանի նախագահի աշխատակազմի տեղեկատվությամբ՝ վրաց մարզիկներին քաջալերելուց բացի, Վրաստանի նախագահը երկկողմ հանդիպումներ է անցկացրել որոշ պատվիրակությունների ղեկավարների հետ, որոնց գլխավոր թեման եղել է նրանց սատարումն ստանալը Հարավային Օսիայի և Աբխազիայի չճանաչման քաղաքականության մեջ:

Վրաստան-ԵՄ. Հուլիսն ավարտվեց Վրաստանի եվրոպական ինտեգրման քաղաքականության երկար փուլերից մեկով: Տրվեց Եվրամիության հետ

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

թարմացված փոխհարաբերությունների մեկնարկը: Հուլիսի սկզբին սկսվեց ավելի վաղ ստորագրված և հաստատված՝ ԵՄ-ին Վրաստանի ասոցիացման համաձայնագրի լիարժեք գործառնությունը: Լիովին ուժի մեջ մտան համաձայնագրի բոլոր հոդվածները (431), ինչպես նաև դրանում ընդգրկված՝ ԵՄ-ի հետ խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու մասին համաձայնագիրը՝ ստորագրված 2014թ. հունիսի 27-ին Բրյուսելում: Այսպիսով, այն համաձայնագիրը, որը 2014թ. հոկտեմբերի 1-ից արդեն գործում էր ժամանակավոր օգտագործման ռեժիմում (մոտ 80%), կփոխարինի 1996թ. «Գործընկերության և համագործակցության մասին» գործող համաձայնագրին և Վրաստանի ու ԵՄ համագործակցության նոր իրավական շրջանակներ կստեղծի:

Պայմանագիրը նախատեսում է վրացական գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի ազատ տեղաշարժ դեպի եվրոպական շուկա և տեղական շուկային անվնաս և անվտանգ մթերքների մատակարարում: *DCFTA* շրջանակներում վրացական արտադրության գրեթե բոլոր ապրանքները ԵՄ շուկային մատակարարվելիս ազատվում են մաքսատուրքից: Հուլիսի սկզբից ուժի մեջ մտած հոդվածների (20%) շարքում կան այնպիսիները, որոնք կապված են արտաքին քաղաքականության և անվտանգության քաղաքականության հետ: Սկսել են գործել հոդվածներ, որոնք կապված են անհատական տվյալների պաշտպանության, միգրացիայի ոլորտում համագործակցության, ապաստան տրամադրելու և սահմանի հսկման, կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի, հանրային ֆինանսների կառավարման և ֆինանսական, տրանսպորտի վերահսկողության հետ և այլն: Ուժի մեջ է մտել նաև համաձայնագրի երկու հավելված, որոնք վերաբերում են կրթության հարցերում համագործակցությանը:

Չնայած դրան, արդեն օգոստոսին հերթական անգամ ակտուալացվեց մեկ այլ հարց՝ կապված Վրաստանի եվրոպական ինտեգրման հետ: Դա ԵՄ-ի հետ վիզային ռեժիմը հանելու հարցն է, որի իրագործումը ձգձգվեց ողջ ամառվա ընթացքում, իսկ զարգացում սպասվում է սեպտեմբեր-հոկտեմբերին:

ԵՄ-ի հետ անվիզա ռեժիմ մտցնելու հարցը դարձել է օգոստոսի 26-ին Եվրոպական ժողովրդական կուսակցության փոխնախագահ Դևիդ Մաքալիստերի և կուսակցության միջազգային քարտուղար Պատրիկ Վոլքերի Վրաստան կատարած այցի հիմնական թեմաներից մեկը: Այցի ընթացքում եվրոպացի քաղաքական գործիչները հանդիպում են ունեցել վարչապետ

Գեորգի Կվիրիկաշվիլու, ինչպես նաև խորհրդարանական ամենամեծ ընդդիմադիր խմբակցության՝ «Միասնական ազգային շարժում» կուսակցության (ԵԺԿ անդամ է 2008-ից) առաջնորդների հետ:

Վրաստանի վարչապետի հետ եվրախորհրդարանականների հանդիպման ընթացքում, որին ներկա էին նաև Վրաստանի ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն և Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն, քննարկվել են Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան նպատակներին առնչվող հարցեր, այդ թվում՝ ԵՄ-ի հետ Վրաստանի վիզային ազատականացման, դեմոկրատական բարեփոխումների և հոկտեմբերի 8-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ: Վրաստանի վարչապետը հույս է հայտնել, որ երկիրը կստանա Եվրախորհրդարանի լիակատար աջակցությունը վիզային ազատականացման հարցում:

Եվրոպական ժողովրդական կուսակցության փոխնախագահ Դևիդ Մաքալիստերն իր հերթին նշել է, որ «Վրաստանը կատարել է բոլոր առաջադրանքները վիզային ազատականացման գծով և այժմ հերթը ԵՄ-ինն է», որը բոլոր երրորդ երկրների համար անվիզա ռեժիմների նոր մեխանիզմների ընդունումից հետո, անվիզա ռեժիմների չարաշահման և զանգվածային միգրացիայի դեպքում, պետք է որոշում ընդունի առ այն, որ վերացվի վիզաներ ստանալու անհրաժեշտությունը Վրաստանի այն քաղաքացիների կողմից Շենգենյան գոտի այցելելու համար, որոնք կենսաչափական անձնագրեր ունեն: Սպասվում է, որ Վրաստանի քաղաքացիները հնարավորություն կստանան կարճաժամկետ այցելություններ (90 օր ցանկացած 180 օրվա ընթացքում) կատարել Շենգենյան գոտի, որն ընդգրկում է ԵՄ 22 անդամ երկիր, 4 երկիր, որոնք ԵՄ անդամ չեն և Շենգեն գոտի մտնելու 4 թեկնածու երկիր:

Վրաստան-Հայաստան. Ամսվա սկզբին՝ օգոստոսի 1-ին, պաշտոնական այցով Վրաստան ժամանեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը: Այցի ընթացքում Հայաստանի ԱԳՆ ղեկավարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի ԱԳ նախարար Միխայիլ Ջանելիձեի, վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու և նախագահ Գեորգի Մարգվելաշվիլու հետ:

Վրաստանի արտգործնախարար Միխայիլ Ջանելիձեի հետ հանդիպման ընթացքում Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը նշեց, որ «Հայաստանը մեծ նշանակություն է տալիս Վրաստանի հետ հարա-

բերությունների զարգացմանը հնարավոր բոլոր ոլորտներում»: Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Վրաստան երկկողմանի օրակարգի հարցերի լայն շրջանակ՝ համագործակցություն տրանսպորտի (տրանսպորտային փոխադրումների դյուրինացում), էներգետիկ փոխգործակցության, տուրիզմի և մշակութային ժառանգության պահպանման հարցերում, ինչպես նաև հարցեր հայ-վրացական սահմանի սահմանազատման գործընթացի վերաբերյալ:

Նախարարները գոհունակությամբ փաստել են, որ շարունակվում են ակտիվ փոխայցելությունները և արդյունավետ համագործակցությունը երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև, նրանք քննարկել են հարցեր՝ կապված Հայաստանի և Վրաստանի ԱԳՆ-ների պարբերական խորհրդակցությունների, միջազգային կազմակերպությունների շրջանակներում պայմանագրային-իրավական բազայի կատարելագործման հետ: Է.Նալբանդյանը և Մ.Զանելիձեն անդրադարձել են նաև Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի աշխատանքներին, ինչպես նաև քննարկել են միջկառավարական կապերի հետագա զարգացման քայլերը: Բացի այդ, Է.Նալբանդյանը, միջազգային և տարածաշրջանային ակտուալ հարցերի քննարկման ժամանակ, ներկայացրել է «Հայաստանի և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը՝ ուղղված բանակցային գործընթացի զարգացմանը՝ ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման նպատակով» (նույն հարցերը քննարկվել են նաև Վրաստանի վարչապետի և նախագահի հետ հանդիպումների ժամանակ):

Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլու հետ հանդիպումը կրել է ավելի պաշտոնական և արձանագրային բնույթ, որի ընթացքում Հայաստանի արտգործնախարարը տեղեկացրել է վրացական պետության ղեկավարին վրաց պաշտոնակցի և Վրաստանի վարչապետի հետ բանակցությունների արդյունքների մասին:

Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու հետ հանդիպմանը, որն ավելի վաղ էր տեղի ունեցել, կողմերը մեկ անգամ ևս հանգամանալիորեն քննարկել են հայ-վրացական հարաբերությունների օրակարգի բազմաթիվ հարցեր: Վրաստանի կառավարության մամլո ծառայության տեղեկատվությամբ՝ դիտարկվել են առևտրատնտեսական համագործակցության զարգացման, տրանսպորտի և տրանսպորտային ուղիների դիվերսիֆիկացիայի ոլոր-

տում համագործակցության խորացման, էներգետիկայի ոլորտում փոխգործակցության և համագործակցության ամրապնդման, մշակութային փոխանակումների խրախուսման և զբոսաշրջության զարգացման հարցեր: Այս համատեքստում նշվել է նաև հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքի ակտիվացման կարևորությունը, ինչպես նաև կարևորվել են միջազգային կազմակերպությունների շրջանակներում հայ-վրացական համագործակցության ամրապնդման հարցերը:

Էներգետիկայի մասով, ըստ Հայաստանի ԱԳՆ տեղեկատվության, քաղաքական գործիչները ողջունել են նոր 500 կվտ էլեկտրագծի անցկացումը, որի մասին պայմանագիրը երկու երկրների էներգետիկական գերատեսչությունների ներկայացուցիչները ստորագրել են Թբիլիսիում 2014թ. ապրիլին: «Վրաստանի պետական էլեկտրահամակարգ» (*GSE*) ԲԸ տեղեկատվությամբ՝ նոր էլեկտրագիծը կմիացնի Վրաստանն ու Հայաստանը և կփոխարինի արդեն գոյություն ունեցող 400 կվտ-անոց էլեկտրագծին: Պայմանագրի համաձայն՝ հայկական կողմը պետք է ապահովի թանկարժեք արդիական բարձրտեխնոլոգիական սարքավորման (մշտական հոսանքի 350 մվտ-անոց երկու սարքավորում) տեղադրումը, որի առաջին մասը կմոնտաժվի 2018թ., իսկ երկրորդը՝ 2022թ., ինչը կավելացնի երկրների միջև էլեկտրափոխանցումը և նոր մակարդակի դուրս կբերի երկու երկրների էներգաանվտանգությունը: Վրացական կողմում էլեկտրագծի երկարությունը կկազմի 40 կմ:

Վրաստան-Ադրբեջան. Օգոստոսի 29-ին պաշտոնական այցով Վրաստան ժամանեց Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը: Թբիլիսիում նա հանդիպեց իր վրաց պաշտոնակցի՝ Միխայիլ Ջանելիձեի, վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու և խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլու հետ:

Վրաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները քննարկել են համագործակցության բոլոր հիմնական ուղղությունները և դրանց հետագա խորացումն ու ամրապնդումը, այդ թվում՝ իրավիճակն առևտրատնտեսական ոլորտում, որտեղ, ըստ Մ.Ջանելիձեի, Վրաստանն ու Ադրբեջանը «շատ մեծ պոտենցիալ ունեն»: Կողմերը քննարկել են վրացական տնտեսությունում ադրբեջանական ներդրումների աճը, ինչպես նաև 16%-անոց աճը տուրիզմի ոլորտում: Դիտարկվել են նաև տարածաշրջանային տրանսպորտային և էներգետիկ հարցեր: Նախարարները քննարկել են ինչպես տարածաշրջանա-

յին անվտանգության, այնպես էլ չլուծված հակամարտությունների, այդ թվում և ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ հարցեր։

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլու հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են միջխորհրդարանական համագործակցության հարցեր։

Վրաստանի կառավարության ղեկավարի մամլո ծառայության տեղեկատվությամբ՝ Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլու հետ հանդիպման ժամանակ Է.Մամեդյարովը քննարկել է «երկու երկրների ռազմավարական համագործակցության հարցեր», դիտարկել գործընկերության խորացման հեռանկարները քաղաքականության, մշակույթի, էներգետիկայի, առևտրի և տնտեսության ոլորտներում։ Նրանք քննարկել են նաև տարածաշրջանային անվտանգության և տարածաշրջանային նշանակության համատեղ խոշորածավալ էներգետիկ նախագծերի թեմաները։ Նշվել է, որ Վրաստանը և Ադրբեջանը հիմնական տրանսպորտային օղակներն են Արևմուտքի և Արևելքի միջև։ Հանդիպումների արդյունքների հիման վրա հայտարարվել է, որ Գեորգի Կվիրիկաշվիլին առաջիկայում պաշտոնական այցով կմեկնի Ադրբեջան։

Օգոստոսի 31-ին տեղի ունեցավ Վրաստանի վարչապետի ավելի վաղ հայտարարված այցելությունն Ադրբեջան։ Բաքու կատարած մեկօրյա պաշտոնական այցի ընթացքում վրացական կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի և վարչապետ Արթուր Ռասիզադեի հետ, որոնց հետ քննարկեց վրաց-ադրբեջանական հարաբերությունների ընթացիկ իրավիճակը և դրանց հետագա խորացման հեռանկարները։ Ադրբեջանի նախագահի խոսքերով՝ երկու երկրները վարում են «երկխոսություն բոլոր ուղղություններով՝ քաղաքական և տնտեսական ոլորտներում», ներառյալ տրանսպորտի և էներգետիկայի ոլորտները։

Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունների ղեկավարների հանդիպման հիմնական հարցերը վերաբերում էին նաև համագործակցությանը քաղաքական, տնտեսական և հումանիտար ոլորտներում, համատեղ տրանսպորտային և էներգետիկ նախագծերին (Հարավային գազային միջանցք, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղի)։ Ադրբեջանում Վրաստանի վարչապետին ուղեկցում էին փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախա Քալաձեն, փոխարտգործնախարար Գիգի Գիգիաձեն։

ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. օգոստոս

Ռոման Կարապետյան*

Իրանի Իսլամական Հանրապետությունն էլ ավելի ընդգծված երանգներով է շեշտադրում արտաքին քաղաքականության մեջ տարածաշրջանային ուղղության կարևորությունը: Պաշտոնական Թեհրանն առանձնակի հետևողականությամբ փորձում է զարգացնել երկկողմ և եռակողմ ձևաչափով համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության և Թուրքիայի հետ:

Իրան-ՌԴ-Հարավային Կովկաս. Թերևս, Իրանի արտաքին քաղաքականության օրակարգում ամենակարևոր իրադարձությունները կապվում էին Ռուսաստանի և Թուրքիայի հետ:

Օգոստոսի 7-ին երկրի նախագահ Հասան Ռոհանին մեկնեց Բաքու, որտեղ ադրբեջանցի գործընկերոջ հետ հանդիպման շրջանակներում ստորագրվեցին երկկողմ տնտեսական համագործակցության, հաղորդակցության, մշակութային ոլորտների վերաբերյալ համաձայնագրեր: Հաջորդ օրը Բաքվում կայացավ Իրանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների հանդիպումը: Կողմերը քննարկել են տարածաշրջանային անվտանգության, Կասպից ծովի իրավական կարգավիճակի, ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ հարցեր: Օրակարգի հիմնական թեման եղել է Հյուսիս-Հարավ տրանսպորտային հաղորդակցության կազմավորման հարցը, որտեղ այս երեք երկրներն ունեն հանգուցային նշանակություն:

Տեղեկանք. Հյուսիս-Հարավ տրանսպորտային հաղորդակցության կազմավորման վերաբերյալ քննարկումները սկսվել են մոտ երկու տասնամյակ առաջ: Այն նախատեսում է Հնդկաստան-Ռուսաստան, իսկ այնուհետև՝ դեպի Եվրոպա հաղորդակցության գծի ստեղծում, որտեղ հիմնական կապող օղակները Իրանը, Ադրբեջանն ու Ռուսաստանն են լինելու: Նախատեսվող տրանսպորտային գծի երկարությունը կազմում է 7200 կմ՝ ներառելով Մումբայ (Հնդկաստան) - Սանկտ Պետերբուրգ հատվածը:

---

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.:

Բաքվում երեք երկրների նախագահները պայմանավորվածություն են ձեռք բերել գործնական ակտիվ հունի մեջ դնել Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի ստեղծման գործընթացը: Այդ առումով առաջին հերթին կարևորվել է Ռեշտ-Աստարա երկաթգծի շինարարությունն ավարտին հասցնելը, որը կկապի Իրանի և Ադրբեջանի երկաթգծային հատվածները: Կողմերը պայմանավորվածություններ են ձեռք բերել նաև երեք երկրների էներգահամակարգերի միացման վերաբերյալ: Այս գործընթացը սկսելու համար առաջիկա ամիսներին նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ ոլորտի պատասխանատուների միջև: Նախագահները քննարկել են ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարում հետագա համատեղ անելիքների մասին հարցեր: Կողմերը պայմանավորվել են նաև համատեղ ջանքեր գործադրել տարածաշրջանում առկա հակամարտությունների կարգավորման ուղղությամբ: Եռակողմ հանդիպման ընթացքում քննարկման առարկա հանդիսացած բոլոր պայմանավորվածություններն ամրագրվել են ստորագրված համատեղ հուշագրում:

Իրանական կողմը ձգտում է եռակողմ համագործակցության ձևաչափ կազմավորել նաև Ռուսաստանի ու Թուրքիայի հետ: Այս մասին ասել է արտգործնախարար Զարիֆը Թեհրանում ՌԴ նախագահի Մերձավոր Արևելքի հարցերով ներկայացուցիչ Միխաիլ Բոգդանովի հետ հանդիպման ժամանակ:

Տարածաշրջանային տրանսպորտային հաղորդակցության գործընթացներից փորձում է հետ չմնալ նաև Հայաստանը: Իրանում ՀՀ դեսպան Արտաշես Թումանյանը Ղազվին քաղաքում գործարար շրջանակների և արտադրողների հետ հանդիպման ժամանակ ասել է, որ Հայաստանը կարող է լինել դեպի Եվրոպա և Ռուսաստան ամենալավ դարպասն իրանցիների համար: Դեսպանն ընդգծել է նաև, որ Հայաստանի միջնորդական դերակատարությունն էլ ավելի բարձր արժեք է ստանում, քանի որ այն Եվրասիական տնտեսական միության անդամ է:

Իրանը շարունակում է խորացնել Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությունը: Մոսկվայում գտնվող Իրանի զինվորական պատվիրակության հետ հանդիպման ժամանակ ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն խոսել է Իրանի հետ մոտ ապագայում կազմակերպվելիք համատեղ զորավարժությունների մասին: Սակայն ամեն ինչ չէ, որ հարթ է ընթանում համագործակցության այս ոլորտում: Իրանի քաղաքական շրջանակներում, մաս-

նավորապես՝ մեջլիսում, դժգոհությունների մեծ առիթ բարձրացավ Համադան քաղաքում տեղակայված ռազմաբազայից ռուսական ռազմական ինքնաթիռների թռիչքների հետ կապված: Դրանք այնտեղից հարվածներ էին հասցնում Սիրիայում գտնվող գրոհայիններին և ահաբեկիչներին: Մեջլիսի մոտ երկու տասնյակ պատգամավորներ նույնիսկ օրինագիծ առաջ քաշեցին, որով պետք է արգելվի օտարերկրյա զինված ուժերին՝ օգտվել Իրանի ռազմաբազաներից:

Իրան-տարածաշրջան. Ամիսը նշանակալի էր Իրան-Թուրքիա հարաբերություններում գրանցված զարգացումներով: Թեհրանում Թուրքիայի դեսպանն Իրանի հոգևոր առաջնորդի միջազգային հարցերի գծով օգնական Ալի Վելայեթիի հետ հանդիպման ժամանակ ընդգծել է, որ երկու երկրների միջև հարաբերությունները վերջին տասը տարում հասել են զարգացման ամենաբարձր կետին: Օգոստոսի 11-ին Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուի հրավերով Անկարա մեկնեց Իրանի արտգործնախարար Զարիֆը: Արտգործնախարարների միջև հանդիպման ժամանակ կողմերը քննարկել են երկկողմ համագործակցությանը և տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր: Չավուշօղլուն շնորհակալություն է հայտնել Իրանին Թուրքիայում կազմակերպված զինված հեղաշրջման փորձի ժամանակ վերջինիս դիրքորոշման համար: Վերջինս հայտնել է նաև, որ Թուրքիան նախատեսում է մոտ ապագայում ավելացնել Իրանից գնվող գազի ծավալները: Զարիֆը հանդիպել է նաև Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: Հանդիպման ընթացքում Զարիֆը նշել է, որ Իրանը, Թուրքիան և Ռուսաստանը տարածաշրջանի առանցքային երկրներն են, ուստի այստեղ հիմնական հարցերը պետք է կարգավորվեն նրանց անմիջական մասնակցությամբ: Կարծում ենք, սրանով Իրանի արտաքին գերատեսչության ղեկավարն ակնարկում էր նաև եռակողմ համագործակցության զարգացման մասին:

Իրանի և Թուրքիայի դիրքորոշումների մերձեցում է նկատվում նաև սիրիական հարցում: Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմը հայտարարում է, որ Սիրիայի հյուսիսում քրդական ինքնավարության ստեղծումն անթույլատրելի է, և Թուրքիան, Իրանն ու Ռուսաստանը պետք է համաձայնեցված գործեն Սիրիայում: Օգոստոսի 20-ին Չավուշօղլուն չնախատեսված այց կատարեց Թեհրան: Պաշտոնական աղբյուրների հաղորդմամբ, այցելության հիմնական նպատակը Թուրքիայի նախագահ Էրդողանի՝ Իրան կատարելիք այցը նախապատրաստելն էր: Սակայն կարծում ենք, որ սա անմիջական

կապ ուներ մի քանի օր անց թուրքական զորքերի Սիրիա ներխուժման հետ: Սիրիայի հյուսիս թուրքական զորքերի ներխուժումից հետո պաշտոնական Թեհրանը հայտարարեց, որ Թուրքիան դա անում է միջազգային իրավունքի նորմերի խախտմամբ, իսկ ավելի ուշ սկսեց խոսել այնտեղից թուրքական զորքերի դուրսբերման անհրաժեշտության մասին: Սակայն հարկ է նշել, որ Թեհրանն իր հայտարարություններն անում է ոչ ամենաբարձր մակարդակով ու ոչ կտրուկ տոնով, ինչպես սովոր է անել սիրիական հարցում: Ակնհայտ է, որ Իրանին նույնպես ձեռնտու չէ Սիրիայի հյուսիսում քրդական պետության ձևավորումը, ուստի, մեր կարծիքով, այդ հայտարարություններն առավելապես դեկլարատիվ բնույթ էին կրում: Թեհրանն առավելապես շեշտադրում է այն հանգամանքը, որ Սիրիայում իրականացվող գործողությունները Թուրքիան պետք է համաձայնեցնի Իրանի ու Ասադի կառավարության հետ, որպեսզի տարածաշրջանում առկա անկայուն իրավիճակն ավելի չսրվի: Կարծում ենք, Իրանը կպահի այս դիրքորոշումն այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքիան Սիրիայում չի շոշափել իր շահերը:

Օգոստոսի 4-ին Թեհրանում անցկացվեցին քաղաքական խորհրդակցություններ Աֆղանստանի ներկայացուցիչների հետ: Քննարկման հիմնական թեմաներն էին ահաբեկչության դեմ պայքարի, Աֆղանստանն Իրանի միջոցով Եվրոպային կապելու հաղորդակցության ուղիների ստեղծման հարցերը: Իրանական կողմը հատուկ շեշտադրել է, որ Աֆղանստանի անվտանգությունն ունի կարևոր նշանակություն Թեհրանի համար, ուստի չպետք է թույլատրել, որպեսզի այն դառնա ահաբեկիչների համար «փախուստի ճանապարհ»: Ահաբեկչության դեմ համատեղ պայքարելու վերաբերյալ Իրանը պայմանավորվածություններ է ձեռք բերել նաև Ղրղզստանի հետ Բիշքեկում իսլամական հանրապետության հետախուզության նախարար Մահմուդ Ալավիի և նրա ղրղզ գործընկերների միջև հանդիպման ընթացքում:

Իրանը շարունակում է առանձնակի ուշադրություն դարձնել հարևան երկու երկրների՝ Լիբանանի և Սիրիայի հետ հարաբերություններին: Իրանը պատրաստակամություն է հայտնել ռազմական օգնություն ցուցաբերել Լիբանանին ահաբեկչության դեմ պայքարում, եթե վերջինս ցանկանա: Երկրի մեջլիսի ազգային անվտանգության հարցերով հանձնաժողովի ղեկավար Ալաեդին Բորաջերդին Դամասկոսում հանդիպել է Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հետ: Կողմերը քննարկել են ահաբեկչության դեմ պայքարում հե-

տագա համատեղ անելիքները: Կարծում ենք, որ այս հանդիպմանն ամենայն հավանականությամբ քննարկվել է նաև Սիրիա թուրքական զորքերի ներխուժման հարցը:

Իրան-Արևմուտք. Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում այս ամիս ևս առավելապես բացասական զարգացումներ գրանցվեցին: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հայտարարել է, որ միջուկային համաձայնագիրը դեռևս չի խոսում Իրանի և Գերմանիայի միջև հարաբերությունների կարգավորման մասին: Ըստ Ա.Մերկելի, դրան հնարավոր է հասնել միայն այն դեպքում, եթե Իրանը ճանաչի Իսրայելի անկախ գոյությունը: Իսկ Մեծ Բրիտանիան մեղադրել է Իրանին Եմենի գրոհայիններին զենք մատակարարելու մեջ: Ի պատասխան՝ ԻԻՀ ԱԳՆ ներկայացուցիչ Բահրամ Կասեմին նշել է, որ վերջինս ստում է և մեղադրել է Լոնդոնին տարածաշրջանային երկրների ներքին գործերին խառնվելու մեջ: ԱՄՆ-ը նույնպես մեղադրում է Իրանին Եմենի գրոհայիններին հրթիռներ մատակարարելու մեջ և դիտարկում է Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցներ կիրառելու հարցը: ԻԻՀ հոգևոր առաջնորդի միջազգային հարցերով խորհրդական Ալի Վելայեթին հայտարարել է, որ Իրանը նայում է դեպի Ռուսաստան ու Չինաստան, և իրենց չի հետաքրքրում ԱՄՆ կարծիքը: Կարծում ենք, որ Իրանը չի էլ մտածում զիջումներ անել ԱՄՆ-ի հետ հարաբերությունների կարգավորման գործում, ավելին, ավելի ու ավելի է զգացվում ասիական վեկտորի ուժեղացումը վերջինիս արտաքին քաղաքականության մեջ: Իրանի նախկին նախագահ Մահմուդ Ահմադինեժադն էլ նամակ է գրել ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային՝ պահանջելով մինչև նախագահության ավարտը չեղարկել Իրանի նկատմամբ բոլոր պատժամիջոցները և փոխհատուցել վերջինին հասցված վնասները:

Այլ զարգացումներ են գրանցվում Արևելյան Եվրոպայի երկրների հետ հարաբերություններում: ԻԻՀ արտգործնախարարի Ասիա-խաղաղօվկիանոսյան և ԱՊՀ երկրների հարցերով տեղակալ Իբրահիմ Ռահիմպուրն աշխատանքային այցով եղավ Բելառուսում և Մոլդովայում: Քննարկման հիմնական առարկա են հանդիսացել տնտեսական համագործակցությանն առնչվող հարցերը:

Իրանի արտաքին քաղաքականության օրակարգային այլ ուղղություններ. Ամիսը նշանավորվեց Իրանի արտաքին գործերի նախարար Զարիֆի Լատինական Ամերիկայի երկրներ կատարած շրջայցով: Օգոստոսի 22-ից սկսված յոթօրյա շրջագայության ընթացքում Իրանի արտաքին գերատեսչու-

թյան ղեկավարը եղավ Կուբայում, Նիկարագուայում, Բոլիվիայում, Չիլիում, Էկվադորում և Վենեսուելայում: Զարիֆի պատվիրակությունը բազմամարդ էր՝ շուրջ 120 հոգի, որոնցից 60-ը ներկայացնում էր երկրի գործարար շրջանակները: Այցի ընթացքում քննարկման հիմնական առարկա են հանդիսացել տնտեսական և քաղաքական համագործակցությանն առնչվող հարցեր: Լատինական Ամերիկայի երկրների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել ֆինանսաբանկային, առևտրային, հաղորդակցության և այլ ոլորտներում համագործակցության զարգացման վերաբերյալ: Վենեսուելայում նախագահ Նիկոլաս Մադուրոյի հետ հանդիպման ժամանակ քննարկման հիմնական թեման եղել է նավթի շուկայի հարցն ու այս ոլորտում ՆԱԵԿ-ում հետագա անելիքները: Մանագուայում Զարիֆը հայտնել է Նիկարագուայում նախատեսվող ջրանցքի շինարարությանը մասնակցելու Իրանի հետաքրքրության մասին: Ջրանցքի շինարարության աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2019թ., որն, ըստ նախնական պայմանավորվածության, պետք է իրականացնեն չինական ընկերությունները:

Միջուկային էներգետիկայի ոլորտը շարունակում է առաջնային դիրքերում մնալ: Իրանը պայմանավորվածություն է ձեռք բերել ռուսական «Ռոսատոմ» ընկերության հետ Բուշեհրում երկրորդ միջուկային էներգաբլոկի կառուցման վերաբերյալ: Փաստորեն, կարող ենք ասել, որ միջուկային համաձայնագիրը դեռևս միայն ի նպաստ է աշխատում Իրանում խաղաղ միջուկային ծրագրերի զարգացմանը: Նավթային ոլորտում, թեպետ ակնկալիքները 2016-ի համար բավական մեծ էին, Իրանին դեռևս չի հաջողվում օտարերկրյա մեծածավալ ներդրումներ ունենալ իր տարածքում: Օտարերկրյա ներդրողները, որոնցից Իրանն այս տարի ակնկալում էր $50 մլրդ-ի ներդրում, կատարել են ընդամենը նախատեսվող ծավալի 10%-ը: Հիմնական խնդիրն այն է, որ դեռևս մութ կետեր կան Իրան-Արևմուտք հարաբերություններում, ուստի ամեն պահի կարող են նոր պատժամիջոցներ կիրառվել Իրանի նկատմամբ՝ մեծացնելով կատարած ներդրումները կորցնելու ռիսկը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. օգոստոս

Հայկ Գաբրիելյան[*]

Թուրքիա-Ռուսաստան. *Տնտեսական.* Օգոստոսին «Ռոսսելխոզնադզորի» պատվիրակությունը ժամանեց Թուրքիա՝ սննդամթերքի լաբորատոր ստուգումներ անցկացնելու համար: 2016թ. առաջին կիսամյակում Թուրքիայից Ռուսաստան գյուղմթերքի արտահանումը նվազել է 58%-ով և կազմել է $1.3 մլրդ: Օգոստոսին հաղորդվեց, որ Թուրքիան պատրաստ է «Թուրքական հոսք» գազատարի միջոցով ապահովել ռուսական գազի մատակարարումը Եվրոպային, ինչպես նաև կիսել գազատարի կառուցման ֆինանսավորումը: Ռուսաստանի էներգետիկայի նախարար Ալեքսանդր Նովակը հույս հայտնեց, որ Աքքույուի ատոմակայանին ռազմավարական ներդրման կարգավիճակ հատկացնելը, որը նախատեսում է հարկային արտոնություններ, հնարավորություն կտա արագացնել նախագծի իրագործումը:

Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն հայտարարեց, որ Ռուս-թուրքական բարձր մակարդակի համագործակցության խորհրդի նիստը կարող է տեղի ունենալ ձմռանը: Վերջին անգամ այն անցկացվել է 2014թ. դեկտեմբերին: Չավուշօղլուի խոսքով՝ ապրանքաշրջանառության մակարդակը նվազել է 43%-ով, սակայն իրենք նպատակադրվել են այն հասցնել $100 մլրդ-ի: Էրդողանը նույնպես հաստատեց դա. «Մենք ապրանքաշրջանառության ծավալը հասցրել էինք $35 մլրդ-ի, սակայն 2015թ. նոյեմբերյան հայտնի դեպքերից հետո այն նվազեց մինչև $28 մլրդ-ի, ապա ավելի նվազեց»:

Ռոսավիացիայի ղեկավար Ալեքսանդր Ներադկոն հայտարարեց, որ ռուսական մոտ 15 ավիաընկերություն պատրաստ է սկսել չարթերային թռիչքները դեպի Թուրքիա: Տվյալ ոլորտի սահմանափակումները Ռուսաստանում վերացվեցին օգոստոսի վերջին, երբ Ռուսաստանը Թուրքիայից ստացավ համապատասխան երաշխիքներ: Թուրքիայի էկոնոմիկայի նախա-

[*] Թուրքագետ:

բար Նիհաթ Զեյբեքջին հայտարարեց, որ Թուրքիան ցանկանում է անդամակցել ԵԱՏՄ-ին, սակայն առանց վնասելու ԵՄ-ին լիիրավ անդամակցելու գործընթացը և խախտելու ԵՄ-ի հետ Մաքսային միությունը:

Քաղաքական. Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանն օգոստոսի 9-ին մեկնեց Սանկտ Պետերբուրգ՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպելու համար, ինչը հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման փորձից հետո նրա արտասահմանյան առաջին այցն էր: Պուտինն ու Էրդողանը վերջին անգամ հանդիպել էին 2015թ. նոյեմբերի 16-ին Անթալիայում, G20-ի գագաթաժողովում, որից օրեր անց գրանցվել էր «Սու-24»-ի միջադեպը: Այցից առաջ Էրդողանը հույս հայտնեց, որ Պուտինի հետ առաջիկա բանակցությունները նոր էջ կբացեն երկու երկրների հարաբերություններում՝ ճիշտ չհամարելով ինքնաթիռային անցանկալի միջադեպի պատճառով տարածաշրջանի երկու կարևոր երկրների՝ միմյանցից հեռանալը: Պուտինի հետ հանդիպման ժամանակ էլ, որը սկսվեց կողմերի ձեռքսեղմամբ, Էրդողանը հայտարարեց, որ երկու երկրների համագործակցությունն իր ներդրումը կունենա տարածաշրջանի բազմաթիվ խնդիրների լուծման գործում: Էրդողանը նաև շնորհակալություն հայտնեց Պուտինին՝ հանդիպման հնարավորության և ռազմական հեղաշրջման փորձի ժամանակ ցուցաբերած աջակցության համար:

Էրդողանը Ռուսաստանի և Թուրքիայի գործարար շրջանակների հետ հանդիպման ժամանակ «սև ստվեր» որակեց «Սու-24»-ի միջադեպը՝ ընդգծելով, որ Ռուսաստանի ու Թուրքիայի հարաբերությունները «խաթարել» է իսլամական քարոզիչ Ֆեթուլա Գյուլենի կազմակերպությունը: Էրդողանի այս հայտարարությունը տեղավորվում է վերջին շրջանում Թուրքիայում լայն տարածում գտած այն միտման շրջանակներում, որ ամեն անցանկալի կամ անհարմար իրադարձության (Դինքի սպանություն, նախկինում ընդդիմադիր կուսակցապետ Դենիզ Բայքալի մասնակցությամբ սեռական սկանդալ և այլն) տակ թուրքական իշխանությունները տեսնում են գյուլենական հետք: Էրդողանը նաև հայտարարեց, որ Ռուսաստանն ու Թուրքիան մտադիր են քայլեր ձեռնարկել պաշտպանական արդյունաբերության ոլորտում, իսկ Չավուշօղլուն հայտարարեց, որ դա չպետք է դիտարկել որպես ՆԱՏՕ-ի դեմ քայլ: Չավուշօղլուն փոխգործակցության զարգացման համար խնդիր չհամարեց այն, որ Թուրքիան ՆԱՏՕ անդամ է, իսկ Ռուսաստանը՝ ոչ, նշելով, որ ՆԱՏՕ մի շարք անդամներ այդ ոլորտում համագործակցում են Ռուսաստանի հետ: Էր-

դողանի մամլո քարտուղար Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումը չի ազդի Թուրքիայի և ՆԱՏՕ երկխոսության վրա:

Սիրիայի հյուսիսում թուրքական բանակի «Եփրատի վահան» գործողության մեկնարկից հետո ՌԴ ԱԳՆ-ն հայտարարեց, որ Մոսկվայում խորապես մտահոգ են թուրք-սիրիական սահմանի շրջանում տիրող իրավիճակի սրման և հատկապես միջէթնիկական հակամարտության սրացման վտանգի համար: Այդ ժամանակ թուրքական մամուլը գրեց, որ «Սու-24»-ի միջադեպից հետո առաջին դեպքն էր, որ թուրքական մարտական ինքնաթիռները մուտք են գործում Սիրիայի օդային տիրույթ: Պետք է հիշել, որ ինքնաթիռային միջադեպից հետո Ռուսաստանը Սիրիայում տեղակայել էր S-400 նորագույն զենիթահրթիռային համալիրներ, ինչից հետո թուրքական ավիացիան ամբողջովին դադարեցրել էր թռիչքները Սիրիայում: Օգոստոսին պետք է տեղի ունենար Թուրքիայի և Ռուսաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբների պետեր Հուլուսի Աքարի և Վալերի Գերասիմովի հանդիպումը, սակայն այն անհայտ պատճառներով հետաձգվեց անորոշ ժամկետով: «Եփրատի վահան» գործողության մեկնարկից հետո Պուտինն ու Էրդողանը հեռախոսազրույցի ժամանակ քննարկեցին երկկողմ հարաբերությունները, Սիրիայի վերջին զարգացումներն ու ահաբեկչության դեմ պայքարը, շեշտը դրվեց Հալեպին մարդասիրական օգնություն հասցնելուն ուղղված ջանքերի արագացման վրա: Ապա ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարեց, որ Մոսկվան հետևում է «Եփրատի վահան» գործողությանը և կոչ է անում այն համաձայնեցնել սիրիական իշխանությունների հետ, ինչպես նաև չհարվածել ԻՊ-ի դեմ պայքարող Սիրիայի քրդերի դիրքերին:

Թուրքիա – ԱՄՆ. Թուրքիայի արդարադատության նախարար Բեքիր Բոզդաղը հայտարարեց, որ Գյուլենին արտահանձնելու պահանջով երկրորդ հայցն է ուղարկվել ԱՄՆ՝ ընդգծելով, որ եթե ԱՄՆ-ը չարտահանձնի Գյուլենին, ապա Թուրքիայում կբորբոքվեն հակաամերիկյան տրամադրություններ: Էրդողանն ԱՄՆ-ին առաջարկեց ընտրություն կատարել Թուրքիայի և Գյուլենի միջև՝ նշելով, որ մերժման դեպքում ԱՄՆ-ի հետ հարաբերությունները, բնականաբար, չեն վերջանա, սակայն կտուժեն: Նա ընդգծեց, որ իրենք Արևմուտքից աջակցություն չեն ստացել ո՛չ ռազմական հեղաշրջման փորձի ժամանակ, ո՛չ էլ դրանից հետո: ԱՄՆ պետդեպարտամենտը հայտարարեց, որ

ԱՄՆ-ը հարգում է Թուրքիայի նախագահի՝ իր կամքն արտահայտելու, այդ թվում նաև ԱՄՆ իշխանությունների ներկայացուցիչներին քննադատելու իրավունքը: Նշելով, որ Գյուլենի արտահանձնման գործով դատական գործընթացը կարող է երկար տևել, ԱՄՆ պետդեպարտամենտը հայտարարեց, որ ԱՄՆ-ը չի տեսնում Թուրքիայի հետ համագործակցելու և Գյուլենին արտահանձնելու միջև ընտրություն կատարելու անհրաժեշտություն, և որ արտահանձնման մասին Թուրքիայի դիմումը կապված չէ ռազմական հեղաշրջման փորձին Գյուլենի մասնակցության մեղադրանքի հետ: Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմը վստահություն հայտնեց, որ Գյուլենը կվերադարձվի հայրենիք, իսկ Չավուշօղլուն հայտարարեց, որ Թուրքիան չի ցանկանում Գյուլենի հարցում մտածել B և C պլանների մասին: Չավուշօղլուի խոսքերով՝ Արևմուտքը ռիսկի է դիմում «կորցնել» Թուրքիան սեփական սխալների, ոչ թե Ռուսաստանի կամ Չինաստանի հետ Անկարայի հարաբերությունների պատճառով: Նա հերքեց, թե Թուրքիան սպառնացել է աջակցություն չստանալու դեպքում դուրս գալ ՆԱՏՕ-ից, ինչպես նաև այն, որ թուրք քաղաքական գործիչները հայտարարել են, թե ռազմական հեղաշրջման փորձի հետևում կանգնած է ԱՄՆ-ը: Օգոստոսին ԱՄՆ արդարադատության նախարարության պատվիրակությունը ժամանեց Անկարա, ինչը թուրքական մամուլի կողմից որակվեց որպես Գյուլենի արտահանձնման գործընթացի առաջին քայլ:

Թուրքիա – ԵՄ. Չավուշօղլուն ակնարկեց, որ Անկարան կարող է հրաժարվել ԵՄ-ի հետ միգրացիոն գործարքից, եթե Բրյուսելը հոկտեմբերին Թուրքիայի քաղաքացիներին չհատկացնի առանց վիզայի ռեժիմ: Ավստրիայի արտգործնախարար Սեբաստիան Կուրցը դատապարտեց Չավուշօղլուի այդ վերջնագիրը, իսկ Ավստրիայի կանցլեր Քրիստիան Կեռնն առաջարկեց կասեցնել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցային գործընթացը: Նրա խոսքերով՝ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը հազիվ թե հնարավոր է տեսանելի ապագայում, ինչի համար էլ անհրաժեշտ է ունենալ այլընտրանքային հայեցակարգ: Արդյունքում՝ Թուրքիան Վիեննայից հետ կանչեց իր դեսպանին՝ հարաբերությունների վերանայման և ցուցումներ տալու համար: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը հայտարարեց, որ Թուրքիան դեռ պատրաստ չէ դառնալ ԵՄ անդամ:

Քաղաքական ինստիտուտներին աջակցելու համար Թուրքիա ժամանեց Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյոռն Յագլանդը, որը մտա-

հոգություն հայտնեց Թուրքիայի տարբեր կառույցներում սկսված մասշտաբային մաքրումների համար: Թուրքիայի՝ Եվրամիության հարցերով նախարար Օմեր Չելիքը հայտարարեց, որ ռազմական հեղաշրջման փորձից հետո Թուրքիան մտադիր է նոր էջ բացել ԵՄ-ի հետ հարաբերություններում, սակայն դրա հետ մեկտեղ կրկնեց վիզային ռեժիմի վերաբերյալ Չավուշօղլուի սպառնալիքը: Նա «մշակութային ռասիզմ» որակեց Եվրոպական հանձնաժողովում Գերմանիայի ներկայացուցիչ Գյունթեր Օթինգերի այն հայտարարությունը, թե Թուրքիան Էրդողանի նախագահության ժամանակ հազիվ թե դառնա ԵՄ անդամ, և որ Թուրքիայի համար վիզային ռեժիմը չի վերացվի մոտ ժամանակներս:

Էրդողանը հայտարարեց, որ ԵՄ-ը չի կատարում Թուրքիային տված խոստումները, այդ թվում նաև 3 մլրդ եվրո տալու և վիզային ռեժիմը չեղարկելու մասերով, և Թուրքիային անդամակցության հարցում հիմարացնում է արդեն 53 տարի: Բինալի Յըլդըրըմը զգուշացրեց, որ եթե ԵՄ-ը չկատարի միգրացիոն համաձայնագրով պայմանավորվածությունները, ապա փախստականները չեն դառնա միայն Թուրքիայի խնդիրը: Եվրոպական հանձնաժողովը, սակայն, հայտարարեց, որ Թուրքիան նախկինի նման պետք է կատարի 5 պայման՝ ԵՄ-ի կողմից վիզային ռեժիմի չեղարկման համար: ԵՄ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ Սելիմ Ենելի խոսքերով՝ Թուրքիայի իշխանությունները ցանկանում են, որ երկիրը ԵՄ-ին անդամակցի մինչև 2023թ.:

Գերմանիայի կառավարությունը հայտարարեց, որ Թուրքիայի ղեկավարությունն իրեն հաշիվ տալիս է այն բանում, որ համագործակցում է ահաբեկչական խմբավորումների հետ և նրանց համար ծառայում է որպես հենակետ: Թուրքիայի ԱԳՆ-ն դատապարտեց դա՝ նշելով, որ Գերմանիայի կառավարության մեղադրանքները «թյուրընկալման հետևանք» են: Թուրքիան վերջնագիր ներկայացրեց Գերմանիայի կառավարությանը՝ պահանջելով հեռու մնալ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևից, որպեսզի թույլ տա գերմանացի պատգամավորներին այցելել «Ինջիրլիք»: Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ-Վալթեր Շթայնմայերը միջնորդավորված ձևով սպառնաց, որ Բունդեսվերը կհրաժարվի «Ինջիրլիքի» բազան օգտագործելուց, եթե Անկարան շարունակի խոչընդոտել Բունդեսթագի պատգամավորների այցը «Ինջիրլիք»: Շթայնմայերը մանրամասնեց, որ այցն անհրաժեշտ է «Ինջիրլիքում» Բունդեսվերի գտնվելու մանդատի հարցի շուրջ Բունդեսթագի որոշման համար, որի ժամկետը լրանում է դեկտեմբերին:

Թուրքիա–Սիրիա. Օգոստոսի սկզբին Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան ոչ մի դեպքում չի ընդունի Սիրիայի հյուսիսում քրդական պետության ստեղծումը, իսկ Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ առաջիկա 6 ամսում կարող են շատ կարևոր զարգացումներ լինել Սիրիայի թեմայով: Յըլդըրըմի խոսքերով՝ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը պետք է իշխանությունից հեռանա անցումային կառավարության ձևավորումից հետո, քանի որ Թուրքիան Ասադին անընդունակ է համարում սիրիացիներին համախմբելու գործում: «Եփրատի վահան» գործողության մեկնարկից առաջ Չավուշօղլուն հայտարարեց, որ թուրք-սիրիական սահմանը պետք է ամբողջովին մաքրվի ԻՊ-ից: Ապա մեկնարկեց Սիրիայի Ջերաբլուս քաղաքն ԻՊ-ից խլելու գործողությունը, որը համընկավ օսմանյան բանակի կողմից Մերջիդաբըքի ճակատամարտում տարած հաղթանակի 500-ամյակի հետ: Օսմանյան սուլթան Սելիմ Ահեղի (Յավուզ) բանակը 1516թ. օգոստոսի 24-ին Հալեպից հյուսիս այդ ճակատամարտում պարտության է մատնել մամլուքների բանակին, ինչից հետո Օսմանյան պետությանը միացվեցին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը: Թուրքական մամուլն ընդգծեց, որ օսմանների թոռներն ուղիղ 500 տարի անց վերստին Ջերաբլուսում են:

Մեկնաբանելով «Եփրատի վահան» գործողությունը՝ Էրդողանը հայտարարեց, որ այն ուղղված է թե՛ ԻՊ-ի, թե՛ *PYD*-ի դեմ և անհրաժեշտ համարեց Սիրիայի տարածքից Թուրքիայի վրա հարձակումներին վերջակետ դնելը, որոնք իրենց հարկադրեցին դիմելու վճռական գործողությունների:

Թուրքիա–Վրաստան, Ադրբեջան. Օգոստոսին Մևլյութ Չավուշօղլուն հեռախոսազրույցներ ունեցավ Ադրբեջանի և Վրաստանի արտգործնախարարներ Էլմար Մամեդյարովի և Միխայիլ Ջանելիձեի հետ, քննարկեց երկկողմ հարաբերությունները, ինչպես նաև տարածաշրջանային օրակարգի այժմեական հարցերը: Էրդողանն Անկարայում ընդունեց *SOCAR* նախագահ Ռովնագ Աբդուլաևին և ընդգծեց, որ Թուրքիայում *SOCAR* նախագծերը մեծ ներդրում ունեն երկու երկրների տնտեսական զարգացման մեջ:

Էրդողանը հայտարարեց, որ գոյություն ունի Ռուսաստան-Ադրբեջան-Իրան եռակողմ մեխանիզմ, և իրենք առաջարկել են ստեղծել նաև Թուրքիա-Ռուսաստան-Ադրբեջան եռակողմ մեխանիզմ. «Մենք դա քննարկեցինք և պայմանավորվեցինք Պուտինի հետ: Մեջտեղում կա Ղարաբաղյան հիմնախնդիր: Մոտավորապես 23-24 տարի անցավ, բայց այս խնդիրը չլուծվեց, կամ

չցանկացան լուծել, այս գործը շատ ձգձգվեց: Եթե տեղի ունենա 5 շրջանի վերադարձ, ապա կգրանցվի լուրջ տեղաշարժ»: Չավուշօղլուն նույնպես հայտարարեց, որ ԼՂ հարցը կարող է քննարկվել Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան եռակողմ մեխանիզմի շրջանակներում:

Ադրբեջանի Գլխավոր դատախազությունը միջնորդություն ուղարկեց Թուրքիայի Գլխավոր դատախազությանը՝ այդ երկրի տարածքում գյուլենականների հարցով քննչական գործողություններ իրականացնելու համար, որոնց նպատակն Ադրբեջանում գյուլենականներ բացահայտելն է: Անկարայում Գյուլենի շարժման դեմ պայքարը քննարկեցին Թուրքիայի և Ադրբեջանի ներքին գործերի նախարարներ Էֆքան Ալան և Ռամիլ Ուսուբովը: Օգոստոսին մեկնաբանելով Գյուլենի շարժման դեմ պայքարը՝ Էրդողանը մեկ ընտանիքի անդամներ անվանեց Թուրքիան ու Ադրբեջանը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայկ Գաբրիելյան[*]

Հուլիսի 15-ին իրականացվեց Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) պատմության մեջ ամենաարյունալի ռազմական հեղաշրջման փորձը (ՌՀՓ), որին մասնակցեց 8651 զինվորական, ինչը կազմում է բանակի թվակազմի 1.5%-ը, ինչպես նաև 3 նավ, 74 տանկ, 246 զրահատրանսպորտ, 3992 միավոր հրաձգային զենք, 35 ինքնաթիռ, 37 ուղղաթիռ[1]: Դրանից հետո, ինչպես և ակնկալվում էր, մասշտաբային փոփոխություններ սկսվեցին ուժային կառույցներում, ինչն ուղղված է հետագա ՌՀՓ-երը բացառելուն, զինվորական ղեկավարության դերի նվազեցմանը, ուժային կառույցներում քաղաքացիական իշխանությունների դերի բարձրացմանը և ընդհանրապես վճռորոշ դերակատարության հաստատմանը:

Բարձրագույն ռազմական խորհուրդ. Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը 2016թ. հուլիսի 27-ին Անկարայում անսպասելի հանդիպում ունեցավ Թուրքիայի զինված ուժերի (ԹԶՈՒ) Գլխավոր շտաբի (ԳՇ) պետ Հուլուսի Աքարի հետ: 5.5 ժամ տևած հանդիպումից հետո հայտարարվեց, որ ԹԶՈՒ-ին սպասվում է վերջին տարիների ամենամեծ մաքրումը. հանդիպման արդյունքներով որոշվեց ԹԶՈՒ-ից հեռացնել 149 գեներալի ու ծովակալի, 1099 սպայի ու 436 ենթասպայի (ընդհանուր 1684 մարդ): Դրանով իսկ ԹԶՈՒ-ում գործող գեներալների ու ծովակալների թիվը 358-ից պետք է նվազեցվեր մինչև 209-ի: Որոշվեց հեռացնել ցամաքային զորքերի (ՑԶ) 198 գործող գեներալից 87-ին (նաև 726 սպայի և 256 ենթասպայի), ռազմաօդային ուժերի (ՌՕՈՒ) գործող 72 գեներալից 30-ին (նաև 314 սպայի և 117 ենթասպայի), ռազմածովային ուժերի (ՌԾՈՒ) գործող 55 ծովակալից 32-ին (նաև 59 սպայի և 63 ենթասպայի):

Արդեն հաջորդ օրը՝ հուլիսի 28-ին, մեկնարկեց Բարձրագույն ռազմական խորհրդի (*YAŞ*) տարեկան նիստը, որը ՌՀՓ-ի պատճառով անցկացվեց ծրագրված ժամկետից (օգոստոսի 1-4) մի փոքր շուտ: Սկզբնական շրջանում

[*] Թուրքագետ:

[1] TSK darbe girişimi için rakam verdi, En Son Haber, 27.07.2016.

ծրագրված էր, որ *ՅԱՖ*-ի նիստը կտևի 3 օր, սակայն ՌՀՓ-ից հետո որոշվեց այն ավարտել 1 օրում: Ուշագրավ էր, որ *ՅԱՖ*-ի նիստը, որը թուրքական մամուլի կողմից որակվեց որպես ամենակրիտիկական, 1-ին անգամ անցկացվեց ոչ թե ԳՇ շենքում, այլ «Չանքայա» վարչապետական նստավայրում: 5.5 ժամ տևած նիստը նախագահել է Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմը, դրան 1-ին անգամ մասնակցեց պաշտպանության նախարար Ֆիքրի Ըշըքը: *ՅԱՖ*-ի նիստի արդյունքներով հաստատվեց նախօրեին ընդունված որոշումները. ԹԶՈՒ-ից հեռացնել 149 գեներալի ու ծովակալի, 1099 սպայի, 436 ենթասպայի: Բացի այդ, պաշտոնաթող եղավ 47 գեներալ, 99 գնդապետ էլ ստացավ գեներալի կոչում: Այդպիսով գեներալների թիվը նվազեց 64-ով՝ մինչև 261-ի[2]: Էրդողանի մամլո քարտուղար Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ *ՅԱՖ*-ի նիստի որոշումներով իրենց պաշտոնները պահպանել են ԳՇ պետ Հուլուսի Աքարը, ՑԶ հրամանատար Սալիհ Զեքի Չոլաքը, ՌՕՈՒ հրամանատար Աբիդին Ունալը, ՌԾՈՒ հրամանատար Բյուլենթ Բոսթանօղլուն: Ժանդարմերիայի հրամանատար Գալիփ Մենդին չի պահպանել իր պաշտոնը, նրան փոխարինել է ԳՇ պետի տեղակալ Յաշար Գյուլերը, իսկ ԳՇ պետի տեղակալ է դարձել 1-ին բանակի հրամանատար Ումիթ Դյունդարը:

Օգոստոսի 1-ին պաշտոնաթերթում հրապարակվեց Թուրքիայի ՊՆ-ի կողմից 167 գեներալ/ծովակալի նշանակման մասին որոշումը (նրանց զգալի մասը 1-ին անգամ դարձավ գեներալ/ծովակալ), որից 94-ն առնչվում էր ՑԶ-ին, 44-ը՝ ՌՕՈՒ-ին, 22-ը՝ ՌԾՈՒ-ին, 7-ը՝ Գյուլհանեի ռազմաբժշկական ակադեմիային (*GATA*):

Բացի այդ, մեծացվեց *ՅԱՖ*-ի քաղաքացիական անդամների թիվը: Եթե նախկինում նրանք միայն 2-ն էին՝ վարչապետն ու ՊՆ նախարարը, ապա նոր օրենքով *ՅԱՖ*-ի անդամներ դարձան նաև փոխվարչապետները, արդարադատության, արտաքին ու ներքին գործերի նախարարները: Զորատեսակների հրամանատարները պահպանեցին իրենց տեղը, սակայն *ՅԱՖ*-ից դուրս մնացին զորատեսակների հրամանատարությունների հետ կապված բանակի գեներալ/ծովակալները, Ժանդարմերիայի հրամանատարը: *ՅԱՖ*-ի քարտուղարի պաշտոնը խլվեց ԳՇ պետի տեղակալից և տրվեց ՊՆ-ին: Այդպիսով, *ՅԱՖ*-ի քաղաքացիական անդամների թիվը 2-ից հասցվեց 10-ի, իսկ զինվորական անդամների թիվը 12-ից նվազեցվեց 4-ի: Նախկինում *ՅԱՖ*-ի նիստին զինվո-

[2] General sayısı 64 azaldı, Milliyet, 29.07.2016.

բականներից մասնակցում էր 12 մարդ. ԳՇ պետը, ՑԶ, ՌՕՈ, ՌԾՈ հրամանատարները, Ժանդարմերիայի հրամանատարը, բոլոր 4 բանակների հրամանատարները, Կրթական ու դոկտրինի հարցերով հրամանատարության (*EDOK*) ղեկավարը, ՑԶ շտաբի պետը, (ՌԾՈ 4 հրամանատարություններից) Նավատորմի հրամանատարության ղեկավարը[3]:

Օգոստոսի 23-ին Բինալի Յըլդըրըմի նախագահությամբ «Չանքայա» նստավայրում անցկացվեց *ԽԱՇ*-ի նոր նիստ, որը տևեց 1 ժամ 20 րոպե: Դա *ԽԱՇ*-ի 2-րդ նիստն էր ՌՀՓ-ից հետո և 1-ին դեպքն է, երբ 1 տարում անցկացվում է *ԽԱՇ*-ի միանգամից 2 նիստ: Հատկանշական է, որ ԹՀ պատմության մեջ 1-ին անգամ *ԽԱՇ*-ի անդամների մեջ գերակշռել են քաղաքացիական անձինք, ինչի համար էլ այն որակվեց որպես *ԽԱՇ*-ի 1-ին «քաղաքացիական նիստ». նիստին մասնակցել է 4 զինվորական (ԳՇ պետ, ՑԶ, ՌՕՈ, ՌԾՈ հրամանատարներ) և 10 քաղաքացիական անձ (վարչապետ, 5 փոխվարչապետ, 4 նախարար (պաշտպանության, արտաքին գործերի, ներքին գործերի, արդարադատության): Փաստորեն, փոխվարչապետներն ու արտաքին գործերի, ներքին գործերի, արդարադատության նախարարներն առաջին անգամ մասնակցեցին *ԽԱՇ*-ի նիստին: Պաշտոնաթող արվեց 586 գնդապետ, որոնցից 470-ը ներկայացնում էր ՑԶ-ը, 71-ը՝ ՌԾՈ-ն, 45-ը՝ ՌՕՈ-ն: 2 տարով երկարաձգվեց 434 գնդապետի ծառայության ժամկետը, որոնցից 372-ը բաժին է ընկնում ՑԶ-ին, 27-ը՝ ՌԾՈ-ին, 35-ը՝ ՌՕՈ-ին: Սպաների ծառայության ժամկետն օգոստոսի 30-ից նվազեցվեց մինչև 28 տարվա[4]:

Այսպիսով, *ԽԱՇ*-ը սկսել է հիշեցնել Ազգային անվտանգության խորհրդին (ԱԱԽ), որը ԹՀ զինվորական-քաղաքացիական համագործակցության ամենաբարձր հարթակն է: ԱԱԽ անդամներն են երկրի նախագահը, վարչապետը, ԳՇ պետը, փոխվարչապետները, արդարադատության, պաշտպանության, ներքին ու արտաքին գործերի նախարարները, ՑԶ, ՌՕՈ, ՌԾՈՒ, Ժանդարմերիայի հրամանատարները: Փաստորեն, *ԽԱՇ*-ի մեջ ԱԱԽ անդամներից չեն մտնում միայն երկրի նախագահն ու ՆԳՆ-ին ամբողջովին կցված Ժանդարմերիայի հրամանատարը:

ԳՇ և զորատեսակների հրամանատարություն. 2016թ. հուլիսի 31-ին Թուրքիայի ՑԶ, ՌՕՈ, ՌԾՈ հրամանատարությունները ԳՇ-ից անցան ՊՆ ուղիղ ենթակայության տակ: Ընդ որում՝ դա վերաբերում է թե՛ խաղաղ, թե՛

[3] Genelkurmay Başkanı artık barışta TSK'nın komutanı değil, T24, 01.08.2016.

[4] İşte YAŞ kararları: 586 albay emekli edildi, görev süresi düşürüldü, Cumhuriyet, 23.08.2016.

պատերազմական ժամանակներին: Համապատասխան որոշումն ընդունել է Թուրքիայի կառավարությունը[5]: Հարկ է նշել, որ սա հակասում է մինչև 2033թ. ԹԶՈ-ում համապարփակ բարեփոխումներ իրականացնելու պլանին, որի համաձայն՝ խաղաղ և պատերազմական ժամանակներում ԹԶՈ ղեկավարումը զորատեսակների հրամանատարությունների օգնությամբ պետք է իրականացնի ԳՇ-ն:

Հուլիսի վերջին Էրդողանը խորհրդարանի ղեկավարության հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ ԳՇ պետն ու Ազգային հետախուզական կազմակերպության (*MIT*) ղեկավարը ենթարկեցվելու են նախագահին. «Սահմանադրության համաձայն՝ ԹԶՈ գլխավոր հրամանատարը ես եմ, սակայն ԳՇ-ն ու *MIT*-ը ենթարկվում են վարչապետին: Պետք է շտկել դա»[6]: Ապա Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ ԳՇ պետն այսուհետ ընտրվելու է գեներալների ու ծովակալների թվից և ոչ թե նախկինի նման՝ միայն զորատեսակների հրամանատարներից[7]: Օգոստոսի 17-ին պաշտոնաթերթում հրապարակված որոշմամբ ԳՇ պետ կարող է դառնալ գործող բանակի գեներալ/ծովակալներից մեկը, որի թեկնածությունն առաջադրելու է կառավարությունը և հաստատելու է երկրի նախագահը: Այդպիսով, Էրդողանը ստանում է ԳՇ պետ նշանակելու իրավունք: Թուրքական մամուլն ընդգծեց, որ եթե նախկինում ԳՇ պետը համարվում էր թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական ժամանակ ԹԶՈ հրամանատարը, ապա այսուհետ չի լինելու այդպես[8]:

Օգոստոսի սկզբին Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ ԳՇ-ն պետք է դուրս բերվի մայրաքաղաք Անկարայից: Դեռ հայտնի չէ, թե որտեղ կտեղափոխվի ԳՇ-ն: Ներկայումս ԳՇ ու ՊՆ շենքերը գտնվում են Անկարայի կենտրոնում՝ խորհրդարանի շենքի առջև, և մայրաքաղաքից ԳՇ-ի հեռանալուց հետո 2 շենքն էլ կօգտագործվի ՊՆ-ի կողմից: Օգոստոսի 12-ին Ֆիքրի Ըշըքը հայտարարեց, որ տարվում են նախապատրաստական աշխատանքներ՝ խոշոր քաղաքներից զորամասերը դուրս բերելու համար՝ ընդգծելով, որ զորամասերի տարածքներում կստեղծվեն պետական կառույցներ, կամ էլ դրանք կտրվեն ժողովրդի տնօրինությանը: Նրա խոսքով՝ Ստամբուլից ու Անկարայից զորամասերի դուրսբերման գործընթացն իրականացվելու է օգոստոսի 22-ից սեպտեմ-

[5] Kuvvet Komutanlıkları MSB'ye bağlandı, CNN TÜRK, 31.07.2016.
[6] Erdoğan, MİT ve Genelkurmay Cumhurbaşkanına bağlanacak!, A-Haber, 31.07.2016.
[7] Başbakan Yıldırım: 'Genelkurmay Başkanı generaller arasından seçilecek', Anadolu ajansı, 01.08.2016.
[8] İki yeni KHK daha: Genelkurmay başkanını cumhurbaşkanı atayacak, Insan Haber, 17.08.2016.

բերի 15-ին[9]: Բնականաբար, այս ամենն արվում է հետագա ՌՀՓ-երի ժամանակ զինվորականների կողմից Ստամբուլի ու Անկարայի կարևոր շենքերը գրավելու հավանականությունը նվազեցնելու կամ իսպառ բացառելու համար:

Հուլիսի վերջերին պաշտոնաթերթում հրապարակված կառավարության որոշմամբ Ժանդարմերիայի հրամանատարությունն ու Առափնյա անվտանգության հրամանատարություններն ամբողջովին ենթարկեցվեցին ՆԳՆ-ին: Հիշեցնենք, որ մինչ այդ Ժանդարմերիան ու Առափնյա անվտանգությունը խաղաղ ժամանակ ենթարկվում էին ՆԳՆ-ին, իսկ պատերազմական ժամանակ՝ ԳՇ-ին[10]: Դրանից օրեր անց Թուրքիայում ստեղծվեց Ժանդարմերիայի ու Առափնյա անվտանգության ակադեմիա[11]:

MIT. ՌՀՓ-ից հետո Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ *MIT*-ում կիրականացվեն մի շարք բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն նրա կատարելագործմանը: Յըլդըրըմի խոսքերով՝ *MIT* ղեկավար Հաքան Ֆիդանը չի կարողացել բացատրել, թե ինչու *MIT*-ը տեղեկություններ չի ունեցել երկրում պատրաստվող ՌՀՓ-ի վերաբերյալ, որի մասին պետք է նախապես իրազեկվեին երկրի նախագահն ու վարչապետը, ինչը, սակայն, տեղի չի ունեցել[12]: Ավելի վաղ հաղորդվել էր, որ Էրդողանը ՌՀՓ-ի օրը չի կարողացել կապ հաստատել Հաքան Ֆիդանի հետ, ինչը հարուցել է նրա խիստ դժգոհությունը: Էրդողանի խոսքերով՝ *MIT*-ը պետական կառույցներին չի զգուշացրել պատրաստվող ՌՀՓ-ի մասին, ինչը վկայում է, որ *MIT*-ը ֆիասկո է կրել (ավելի վաղ հաղորդվել էր, որ Հաքան Ֆիդանը կարող է նշանակվել Ճապոնիայում Թուրքիայի դեսպանի պաշտոնում, սակայն հարցը ձգձգվում է այն պատճառով, որ նման «իրազեկ» մարդուն այդքան հեռու բաց թողնելը նպատակահարմար չէ, նախընտրելի է նրան երկրում պահելը):

Թուրքիայի փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշի խոսքերով՝ *MIT*-ը պետք է բաժանվի 2 մասի՝ արտաքին ու ներքին հետախուզության: *MIT*-ի արտաքին հետախուզությունը կգտնվի ԹՀ նախագահի, իսկ ներքին հետախուզությունը՝ ոստիկանության ու Ժանդարմերիայի ենթակայության ներքո: Որպես օրինակներ բերվում են ԱՄՆ-ը (*CIA* և *FBI*) և Մեծ Բրիտանիան (*MI5* և *MI6*):

[9] Askeri birlikler bir ay içinde taşınacak, TRT Haber, 12.08.2016.
[10] Jandarma ve Sahil Güvenlik Komutanlığı İçişleri Bakanlığına bağlandı, Sabah, 27.07.2016.
[11] Jandarma ve Sahil Güvenlik Akademisi kuruldu, Hürriyet, 31.07.2016.
[12] Binali Yıldırım: MİT başkanına sordum cevap veremedi, Yeni Akit, 03.08.2016.

Ռազմական դատարաններ, վարժարաններ, հոսպիտալներ. Օգոստոսի սկզբին Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ փակվելու են Ռազմական բարձրագույն վարչական դատարանը (*Yüksek Askeri İdare Mahkemesi*) և Ռազմական գերագույն դատարանը (*Askeri Yargıtay*), ինչպես նաև բանակային ավիացիոն դպրոցը: Յըլդըրըմի խոսքերով՝ ծրագրված է ռազմական գործարանները, վերանորոգման հիմնարկներն ու նավաշինարանները ԳՇ ենթակայությունից հանձնել ՊՆ-ին[13]: Չի բացառվում, որ ռազմական դատարանների համակարգն ընդհանրապես վերացվի և բանակում թողնվեն միայն կարգապահական դատարանները, որոնք բացառապես կզբաղվեն գործող զինծառայողների կանոնադրական խախտումների հարցով: Զինվորականների հետ կապված մնացյալ բոլոր հարցերը կդիտարկվեն քաղաքացիական դատարանների կողմից: Մեկ այլ տարբերակի համաձայն՝ ԳՇ-ն իր տրամադրության տակ կպահպանի ռազմական բոլոր դատական ատյանները, սակայն դրանք պետք է իրենց որոշումները համաձայնեցնեն Գերագույն դատարանի հետ:

Հուլիսի վերջին առողջապահության նախարարությանը ենթարկեցվեցին *GATA*-ն և երկրում գործող բոլոր հոսպիտալները, որոնք նախկինում գտնվում էին ԳՇ ենթակայության ներքո: Խոսքը 26 նահանգում գտնվող 32 հոսպիտալի և մեկ վերականգնողական ու խնամքի կենտրոնի մասին է: *GATA*-ի Հայդարփաշայի կրթական հիվանդանոցն անվանափոխվեց սուլթան Աբդուլհամիդի կրթական ու հետազոտական հիվանդանոցի (*GATA*-ն ստեղծվել է Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման ժամանակ՝ 1898թ.)[14]: Կառավարությունը նաև դադարեցրեց Թուրքիայի ռազմական բոլոր ակադեմիաների ու վարժարանների գործունեությունը, որոնք զբաղված էին կրտսեր սպայակազմի պատրաստմամբ: Այդ հիմնարկները կշարունակեն գործել ստեղծվող Ազգային պաշտպանության համալսարանի (*MSÜ*) ղեկավարության ներքո: Այնտեղ կպատրաստվեն կադրային սպաներ, ՑԶ, ՌՕՈ, ՌԾՈ մասնագետներ: *MSÜ*-ի ղեկավարությունը կիրականացնի ռեկտորատը: *MSÜ*-ին կից կստեղծվեն ՑԶ, ՌՕՈ, ՌԾՈ ակադեմիաներ[15]:

ՆԳՆ. Օգոստոսի վերջերին հայտնի դարձավ, որ Թուրքիայում կին ոստիկաններն այսուհետ կարող են հիջաբ (գլխաշոր) կրել: Համապատասխան

[13] Başbakan: Kara Havacılık Okulu'nu, Askeri Yüksek İdare Mahkemesi'ni ve Askeri Yargıtay'ı kapatacağız, T24, 02.08.2016.

[14] GATA ile askeri hastaneler Sağlık Bakanlığı'na bağlandı, Milliyet, 31.07.2016.

[15] Milli Savunma Bakanlığı bünyesinde Milli Savunma Üniversitesi kuruldu, Anadolu ajansı, 31.07.2016.

որոշումը հրապարակվեց պաշտոնաթերթում: Հուլիսի վերջին Թուրքիայի ներքին գործերի նախարար Էֆքան Ալան հայտարարեց, որ ոստիկանությունը կստանա ծանր սպառազինություն՝ հիշեցնելով, որ ոստիկանությունը նախկինում նույնպես ունեցել է ծանր սպառազինություն: Նախարարը հիշեցրեց, որ Թուրքիայում իրականացվել են մի շարք ռազմական հեղաշրջումներ, և համոզմունք հայտնեց, որ ոստիկանության կողմից ծանր սպառազինություն ունենալը կնպաստի այսուհետ նման իրադարձությունների բացառմանը[16]: Արդեն նշվեց, որ ՆԳՆ-ին ամբողջովին ենթարկեցվել են Ժանդարմերիան և Առափնյա անվտանգությունը: Հուլիսի վերջին Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ հրթիռային համակարգերն այսուհետ կպաշտպանեն Թուրքիայի նախագահական ու վարչապետական նստավայրերը, խորհրդարանի շենքը, որոնք ՌՀՓ-ի ժամանակ ենթարկվել են զինված հարձակումների[17]: Թուրքական մամուլի պնդմամբ՝ նախագահի նստավայրն այսուհետ պաշտպանելու է թուրքական *Aselsan* ընկերության մշակած *Korkut* («Սարսափ») ՀՕՊ համակարգը, և որ ՌՀՓ-ից հետո Էրդողանի բոլոր այցերի ժամանակ նրան ուղեկցում են վերջին տեխնոլոգիաներով սպառազինված հատուկջոկատայինները:

ՌՀՓ-ի հանդեպ հաղթանակի փառաբանում. Հուլիսի վերջերին Թուրքիայում ՌՀՓ-ի ժամանակ զոհված քաղաքացիների ընտանիքները հավասարեցվեցին ծառայողական պարտքի կատարման ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքներին: Վարչապետական ապարատը գործարկեց ՌՀՓ-ի ժամանակ զոհվածների ընտանիքների ու տուժածների հետ «Ներդաշնակության արշավը», որի շրջանակներում նրանց օգնելու համար բանկերում բացվեցին հաշվեհամարներ: Թուրքիայի զբաղվածության ու սոցիալական անվտանգության նախարար Սուլեյման Սոյլուն հայտարարեց, որ իշխանությունները փոխհատուցում կվճարեն ՌՀՓ-ի ժամանակ զոհվածների և տուժածների ընտանիքներին: Նախարարի խոսքերով՝ նրանք կստանան մինչև $79 հազ. միանվագ փոխհատուցում: Բացի այդ, նրանք նաև կստանան ամսական ավելի քան $1000 նպաստ, իսկ ընտանիքի 2 անդամներ կապահովվեն աշխատանքով[18]:

Հուլիսի վերջերին Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ հուլիսի 15-ը Թուրքիայում նշելու են որպես «Ժողովրդավարության համար զոհվածների օր»: Նա նաև հայտարարեց, որ փակվելու է Անկարայի մոտ գտնվող «Աքընջը»

[16] Efkan Ala: Polisin ağır silahları olacak, Cumhuriyet, 28.07.2016.
[17] Cumhurbaşkanlığı Külliyesi'ne füze sistemli koruma, En Son Haber, 26.07.2016.
[18] Şehit ailelerine 240 bin lira tazminat ödenecek, Sabah, 05.08.2016.

ավիաբազան և նրա տեղում կառուցվելու է այգի. «Ցանկանում եմ հայտնել, որ փակվելու է «Աքընջըի» ավիաբազան, ուր իրենց բջիջներն են ձևավորել դավաճանները: Այդ տարածքը դառնալու է վայր, ուր կհարգեն զոհվածների հիշատակը»[19]: Օգոստոսի կեսերին Ֆիքրի Ըշըքը հայտարարեց, որ «Աքընջըի» տեղում, որը ՌՀՓ-ի օրը ծառայել է որպես խռովարարների հիմնական բազա, կստեղծվի Ժողովրդավարության այգի[20]: Հարկ է նշել, որ «Աքընջը» ավիաբազան ժամանակին ստեղծվել է Անկարայի օդային պաշտպանության նպատակով: Ի դեպ, ավիաբազան սեպտեմբերի սկզբին ստացավ «Մյուրթեդ» (հավատուրաց) անվանումը, որն օգտագործվել է մինչև 1995թ., ինչից հետո ստացել է «Աքընջը» անվանումը[21]: «Աքընջը» ավիաբազան գտնվում է Անկարայի նահանգի Քազանչ շրջանի Մյուրթեդի հովտում, որի անվանումը ծագել է 1402թ. Անկարայի ճակատամարտում Լենկ Թեմուրից օսմանյան սուլթան Բայազիդ 1-ի կրած պարտությունից, որի համար թուրքական կողմը մեղադրում է ճակատամարտի ժամանակ օսմանյան սուլթանին դավաճանած և Լենկ Թեմուրի կողմն անցած սև թաթարներին:

Հուլիսի վերջերին Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ Ստամբուլում Բոսֆորի նեղուցով անցնող «Բողազիչի» կամուրջը, որը եղել է խռովարարների 1-ին թիրախը, վերանվանվելու է նահատակների պատվին՝ «Հուլիսի 15-ի նահատակների կամուրջ»[22]: Անկարայի քաղաքապետ Մելիհ Գյոքչեքը հայտարարեց, որ Անկարայի կենտրոնում գտնվող «Քըզըլայ» հրապարակը վերանվանվելու է «Հուլիսի 15-ի Քըզըլայի ժողովրդավարության հրապարակի». «Անվանափոխվելու է նաև ԳԾ շենքի առջևի հրապարակը, որը ստանալու է «Հուլիսի 15-ի նահատակների հրապարակ» անվանումը: ՌՀՓ-ի ժամանակ ուղղաթիռներից կրակել են այդ հրապարակի ուղղությամբ, ուր զոհվել են բազմաթիվ քաղաքացիներ: «Հուլիսի 15-ի նահատակների հրապարակում» տեղակայվելու է հեղաշրջման զոհերի հիշատակին նվիրված հուշարձան»[23]: Թուրքական *Pana Film* կինոընկերությունը «Գայլերի հովիտը» սերիալի շրջանակներում ֆիլմ կնկարահանի ՌՀՓ-ի մասին, որը ստանալու է «Գայլերի հովիտը - հեղաշրջում» անվանումը[24]:

[19] Başbakan Binali Yıldırım: Akıncı Üssü kapatılacak, NTV, 29.07.2016.
[20] Fikri Işık: Akıncı Üssü Demokrasi Parkı olacak, En Son Haber, 12.08.2016.
[21] Akıncı Üssü'nün adı ''Mürted'' olarak değişti, NTV, 06.09.2016.
[22] Başbakan Yıldırım: Boğaziçi Köprüsü'nde anlamlı isim değişikliği, Sabah, 25.07.2016.
[23] Melih Gökçek açıkladı: Kızılay Meydanı'nın adı değişiyor, soL Haber Portalı, 26.07.2016.
[24] Kurtlar Vadisi Darbe filmi çekilecek, En Son Haber,15.08.2016.

Օգոստոսի կեսին հայտնի դարձավ, որ «Թուրքական ավիաուղիներ» (*THY*) ավիաընկերությունը 8 օդանավի վրա «հավերժացնելու» է ՌՀՓ-ի ժամանակ ժողովրդավարությունը պաշտպանելիս զոհվածների հիշատակը: Այդ 8 օդանավերն անվանվելու են Ստամբուլի 5 և Անկարայի 3 շրջանների ու արվարձանների անուններով, ուր ՌՀՓ-ի ժամանակ կատաղի դիմակայություն է գրանցվել խռովարարների ու բնակիչների միջև[25]: *THY*-ն նաև պատրաստակամություն հայտնեց օգնել ԹՋՈւ-ին՝ լրացնելու համար մարտական օդաչուների պակասը, ինչն առաջացել է ՌՀՓ-ից հետո ԹՋՈւ-ից հարյուրավոր օդաչուների հեռացման պատճառով (ՌՀՓ-ից հետո F-16, F-4 տիպի ինքնաթիռները շահագործելու համար 1 ինքնաթիռին բաժին է ընկնում 1 օդաչու): Փորձագետների համաձայն՝ ԹՋՈւ տրամադրության տակ կա տարբեր տիպի 450 ինքնաթիռ, որոնցից 300-ը F-16 և F-4 են, որոնց շահագործման համար պահանջվում է առնվազն 675 օդաչու: *THY*-ի շարքերում կա 800 օդաչու, որոնք սերում են ԹՋՈւ-ից (նրանից հեռացած մարտական օդաչուներ, որոնցից 500-ը ԹՋՈւ-ից *THY* է տեղափոխել վերջին 5 տարում) և կարող են աշխատել թե՛ բանակում, թե՛ քաղաքացիական սեկտորում[26]:

Օգոստոսի 30-ին Մերսինում տեղադրվեց ավագ սերժանտ Օմեր Հալիսդեմիրի 4.6 մետր բարձրությամբ արձանը: Նա ՌՀՓ-ի ժամանակ դիմահար կրակոցով սպանել էր հեղաշրջման համակիր, հատուկ նշանակության զորքերի գեներալներից Սեմիհ Թերզիին, ապա զոհվել[27]: Ուշագրավ է, որ Հալիսդեմիրի արձանը տեղադրվեց 1915-1916թթ. Չանաքքալեի (Դարդանել) ճակատամարտի հերոսներից Սեյիթ Ալի Չաբուքի (Օնբաշը) արձանի կողքին, որը մարտերի ժամանակ քանիցս շալակած տեղափոխել է 215 կգ կշռող ռումբերը (ճակատամարտի ավարտից 1 օր անց, երբ ցանկացել են նրա հետ նկարվել ռումբը շալակած վիճակում, Չաբուքը, չնայած գործադրած ջանքերին, այդպես էլ չի կարողացել բարձրացնել ռումբը, ինչից հետո հայտարարել էր. «Եթե նորից պատերազմ լինի, կրկին կշալակեմ»):

Ուշագրավ է, որ օգոստոսի 30-ին Թուրքիայում մեծ հաղթանակի 94-ամյակը (1922թ. օգոստոսի 26-30-ին Դումլուփընարի ճակատամարտում քեմալականների կողմից հույների դեմ տարած հաղթանակ) ու ԹՋՈւ-ի տոնը նշե-

[25] THY 15 Temmuz mücadelesini 8 uçakla yaşatacak, Milliyet, 15.08.2016.
[26] THY'den TSK'daki pilot açığı için adım, Sputnik Türkiye, 23.08.2016.
[27] Mersin'de Ömer Halisdemir'in anıt heykeli açıldı, Sözcü, 30.08.2016.

լիս տոնակատարություններին ԹՀ պատմության մեջ առաջին անգամ չմասնակցեցին տանկեր, հրետանի, զրահամեքենաներ, մարտական ինքնաթիռներ ու ուղղաթիռներ՝ կապված ՌՀՓ-ի հետ[28]:

Հուլիսի 28-ին *ՅԱՖ*-ի նիստի անդամներն այցելեցին Անըթքաբիր՝ ԹՀ հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի դամբարան, ուր Բինալի Յըլդըրըմը գրառումների տետրում ՌՀՓ-ի ձախողումը որակեց որպես «երկրորդ ազատագրական պատերազմում» (քեմալական շարժման) տարած հաղթանակ[29]: Օգոստոսի 7-ին Յըլդըրըմը Ստամբուլի Յենիքափը հրապարակում «Ժողովրդավարության ու շեհիթների համար» հանրահավաքի ժամանակ հայտարարեց, որ 2016թ. հուլիսի 15-ը օրացույցի մեջ մտավ որպես «Թուրքիայի երկրորդ Ազատագրական պատերազմի օր». «Չանաքքալեում, Ազատագրական պատերազմի ժամանակ դաստան գրած այս ժողովուրդը նույն ոգով դաստան գրեց նաև հուլիսի 15-ին: Հուլիսի 15-ը Երկրորդ ազատագրական պատերազմն է»[30]: Այսպիսով, ակնհայտ փորձ է արվում ՌՀՓ-ի դեմ տարած հաղթանակն ուռճացնելու, այն փառաբանելու, Դարդանելի օպերացիայի ու քեմալական շարժման հաղթանակի հետ մեկ շարքում դասելու համար: Դրանով փորձ է արվում նաև առնվազն հավասարության նշան դնել Աթաթուրքի ու Էրդողանի միջև՝ որպես «ազատագրական 2 պատերազմների» հաղթողներ:

Օգոստոսի կեսին Նուման Քուրթուլմուշը, մեկնաբանելով ՌՀՓ-ից հետո ԹՁՈ վերակազմավորման գործընթացը, հայտարարեց, որ ԹՁՈ-ն այսուհետ կզբաղվի միայն հայրենիքի պաշտպանությամբ, կլինի ազգային միասնության, համերաշխության և երկրի սահմանների պաշտպան, երբեք չի ներգրավվի ներքին քաղաքականության մեջ և ճնշում չի գործադրի ազգային կամքի վրա. «ԹՁՈ նպատակը պետք է լինի երկրի պաշտպանությունը և ոչ թե ռազմական հեղաշրջումներ ծրագրելը»[31]: Ֆիքրի Ըշըքն իր հերթին հայտարարեց, որ իշխանությունները բանակային բարեփոխումներ են իրականացնում՝ բացառելու համար նոր ՌՀՓ-երը. «Բանակի բարեփոխման ժամանակ մենք փոխում ենք այն մեխանիզմը, որի շնորհիվ ԹՁՈ-ն վերջին 60 տարում կազմակերպել է 6 մեծ և փոքր հեղաշրջում (27.05.1960, 12.03.1971, 12.09.1980, 28.02.1997,

[28] 30 Ağustos Zaferi'nin 94. yılı; ilk kez tanksız-uçaksız tören, T24, 30.08.2016.
[29] Başbakan Yıldırım: Türkiye 15 Temmuz gecesi ikinci bir kurtuluş mücadelesinden zaferle çıkmıştır, Hürriyet, 28.07.2016.
[30] Başbakan Yıldırım: 15 Temmuz ikinci Kurtuluş Savaşı'dır, TRT Haber, 07.08.2016.
[31] Numan Kurtulmuş'tan TSK açıklaması,Vatan, 14.08.2016.

28.04.2007, 15.07.2016)։ Չպետք է թույլ տալ, որ այդչափ զինուժ վերահսկվի մեկ կենտրոնի կողմից, քանի որ մեր երկիրը թանկ է վճարել դրա համար»[32]։

2016թ. սեպտեմբերի սկզբներին ԹԶՈՒ-ն հրապարակեց իր թվակազմի մասին տվյալներ, ինչը նմանատիպ առաջին դեպքն էր ՌՀՓ-ից հետո։ Դրանք վկայեցին, որ ԹԶՈՒ թվակազմը զգալիորեն նվազել է՝ կապված ՌՀՓ-ի հետ (ՌՀՓ-ից հետո ԹԶՈՒ-ից հեռացվածների թիվը հասնում է մոտ 5000-ի[33]) և հատկապես նրա հետ, որ Ժանդարմերիան և Առափնյա անվտանգությունը կցվել են ՆԳՆ-ին, ինչի համար էլ նրանց անձնակազմը տեղ չի գտել ԹԶՈՒ-ի մասին տվյալներում։ ԹԶՈՒ անձնակազմը կազմել է 391.695 մարդ, որից 351.176-ը՝ զինվորականներ, իսկ 40.519-ը՝ քաղաքացիական ծառայողներ։ ԹԶՈՒ-ում գործող գեներալ/ծովակալների թիվը կազմել է 206, սպաների քանակը՝ 29.946 մարդ, ենթասպաների թիվը՝ 67.646[34]։ Հիշեցնենք, որ ԹԶՈՒ անձնակազմի մասին տվյալները վերջին անգամ հրապարակվել էին հուլիսի 1-ին։ Դրանց համաձայն՝ գեներալ/ծովակալների թիվը կազմել էր 358, որոնցից 325-ը բաժին էր ընկել ՑԶ-ին, ՌՕՈՒ-ին ու ՌԾՈՒ-ին, 32-ը՝ Ժանդարմերիային, 1-ը՝ Առափնյա անվտանգությանը։ ԹԶՈՒ անձնակազմը կազմել էր 570.111 մարդ, այդ թվում նաև 39.287-ը՝ սպաներ և 96.391-ը՝ ենթասպաներ։ ԹԶՈՒ անձնակազմի նման խոշոր նվազումը գլխավորապես բացատրվում է ՆԳՆ-ին Ժանդարմերիայի վերջնական կցմամբ։ Նույնը որոշակիորեն կարելի է ասել նաև գեներալների (ու ծովակալների) թվի կտրուկ նվազեցման համար։ Այստեղ պետք է մեջբերել *Stratfor* վերլուծական կենտրոնի ղեկավար Ջորջ Ֆրիդմանի այն խոսքերը, որ ֆրեգատ ղեկավարելու համար նավապետ աճեցնելը տևում է 15, սուզանավի հրամանատարի դեպքում՝ 20, իսկ ծովակալի դեպքում՝ 25 տարի։

Ամփոփելով՝ նշենք, որ թեև Թուրքիայում ծրագրել էին համապարփակ բարեփոխումներ իրականացնել մինչև 2033թ. (ԹՀ հիմնադրման 110-ամյակ), որպեսզի 2033թ. ԹՀ-ն ունենա «նոր ԶՈՒ»[35], սակայն ՌՀՓ-ը զգալիորեն արագացրեց այդ գործընթացը, ընդ որում՝ զգալի շեղումներով։ Եթե 2033թ. հետ կապված ռազմական բարեփոխումներում շեշտը դրվում էր ամեն տիպի սպառնալիքներին դիմագրավելու, արագ որոշում կայացնելու ունակ, ճկուն,

[32] Fikri Işık: Kuleli Askeri Lisesi binasının otel olması kimin aklına gelmiş Allah aşkına?, T24, 04.08.2016.
[33] 820 personel daha TSK'dan ihraç edildi, Yeni Şafak, 01.09.2016.
[34] TSK, 15 Temmuz sonrası ilk kez personel sayısını açıkladı, NTV, 09.09.2016.
[35] Հայկ Գաբրիելյան, Մինչև 2033թ. Թուրքիայի զինված ուժերում իրականացվելիք համապարփակ բարեփոխումների շուրջ, «Նորավանք» ԳԿՀ, 10.06.2015։

ամուր և բարձր մարտունակությամբ, մեր օրերում և ապագայում արդիական, պատերազմին պատրաստ, զսպիչ ուժ հանդիսացող ԹԶՈՒ ունենալուն, որը նաև պետք է զերծ լինի քաղաքական որևէ կողմնորոշումից, ապա ներկայիս համապարփակ բարեփոխումներն առաջին հերթին միտված են զինվորականների և մասնավորապես ԳՇ դերի, ներուժի, հնարավորությունների թուլացմանը՝ հետագա ՌՀՓ-երը բացառելու համար: ԹԶՈՒ թուլացմանը զուգահեռ՝ իրականացվում են Էրդողանի հենարանը համարվող ՆԳՆ-ի կտրուկ ուժեղացում և ընդհանրապես Էրդողանի լիազորությունների ընդլայնում: Սա նշանակում է, որ Էրդողանի համար առաջնային է ներքին և ոչ թե արտաքին վտանգներին, սպառնալիքներին, մարտահրավերներին դիմագրավելը, ինչն էլ ուղեկցվում է ԹԶՈՒ-ի և որոշակի իմաստով՝ Թուրքիայի ներկայիս պաշտպանունակության թուլացմամբ: Մյուս կողմից էլ՝ դա կարող է համապատասխանել այն տեսակետին, որ մոտ 20 տարի անց փոխվելու է պատերազմի ռազմավարությունը, և որ այն ցամաքային պատերազմներից վերածվելու է շատ երկրների ներաշխարհը խառնելուն միտված հարձակումների ռազմավարության:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 26.09.2016թ.
Թիվ 7 (76), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում